Ահա հենց սրանց էլ օգտագործել սկսեցին արհեստավորները: Ակղընական շրջանում շուկայում, որի հասկացութունը Ալեք-Պոլի համար շատ ընդարձակ էր, հետո նաև փողոցներում սրանք բարձրաձայն սկսել են դովարանել, «մուշտարիներ» ուշադրութունն հրավիրել արհեստավորական այնպիսի արտադրանքների վրա, ինչպես օրինակ, դռան փականքներ, կողպեքներ, գործիքներ, այլ առարկաներ, իրեր, հաց և այլն: Աս կական կենդանի դովաղդ, ունկլամ է եղել: Հիշում են, օրինակ, համրալ Մկոյին, որը շնայած ռավական ունեոր է եղել, երկար ժամանակ զբաղվել է այս գործով: Նա ունեցել է ըրաճը ու թավձայն, նա ունկլամի է հանել հացթուփների փուրի հացը, որոնք զցած ուսերին, մեկ առ մեկ բարձրացրել է ձեռքում և դռացել, թե ում եփած լավաշն է, ինչ որսկ ունի և կոչ է արել դնել այդ հացը, հեռո՛ մյուսը, մյուսը: Նա ունկլամել է նաև արհեստավորների տրտադրանքը: Օրինակ, Ալեք-Պոլում եղել է դերմանացի փականագործ (կողպեք շինող) վարպետ, որը պատրաստելիս է եղել դռան փակեր, կողպեքներ: Համրալը բարձրացնելով նրա պատրաստած կողպեքներից մեկը՝ գոռացել է. «Ով կրնանտ իրան ռալնիքով էս կողպեքը ըանալ, կստանա կողպեքը ու 150 մանեթ նվեր»: Ականատեսը պատմում է, որ շատ-շատերը հավաքվում էին փորձելու փականքը ըացել և չէր հաջողվում: Այսպիսով, թե՛ վարպետը մեծ համրավ էր ուտանում և թե՛ ունկլամում էր իր արտադրանքը:

Այս կարգով են վարվել շատ արհեստավորներ, և բոլորն էլ լավ են վարձատրել նման մունեաիկներին: Օրինակ Մկոն, որը, դրեթե բեռնակրություն չի արել, ասլրել է միայն այս գործով, իսկ նրա ընտանիքի անդամները հաղնվելիս են եղել շաա շքեղ: Համրալ Մկոն ունեցել է մեծ պատիվ ու հարգանք, նա կազմակերպելիս է եղել մեծ քեֆեր,

կեր ու խում. սա այն մարդկանցից էր, որ վարձում էր մի քանի կառք և ամեն մեկի մեջ իր զենստենից մեկը դնելով, նվագախմբով պտտվում քաղաքում: Սակայն արհեստավորները չեն բավարարվել միայն մասսայականացման այս ձևից, նրանք աշխատել են մասսայական արտադրանքի համար ստեղծել իրարից տարբերվող նոր ձևեր: Սովորաբար մասսայականի համեմատությամբ սլատվելով կատարված գործը ավելի լավն է լինում և համապատասխանում է տվյալ հաճախորդի պահանջներին: Վարպետն աշխատում էր հնարավորության չափ լավ պատրաստել իրը, հենց սրվյալ հաճախորդի միշտցով այն մասսայականացնելու նպատակով, երբեմն վերցնելով նրանց նույնիսկ կատարված աշխատանքի ոչ լրիվ արժեքը: Սակայն երբ տվյալ իրի պահանջը մեծանում և մասսայական է դառնում, արհեստավորը հանդես է բերում շարունգ և ավելի սլարդ ձևեր է մտցնում, երբեմն ծանրարեւոնում է ձեռքի տակ պատրաստի եղած լրացուցիչ դարդով, փորագրությամբ և այլն: Ինչպես Բ. Առաքելյանն է նշում, լրացուցիչ փորագրումն ու մանավանդ լրացուցիչ կաղսպարի օգտագործումը դիտվել է հատկապես շուկայի համար արտադրելիս, որի համար լուրջալուծ է մասսայական արտադրությանը հարմարեցված տեխնիկա⁵⁵: Այսպես, մինչև շուկայի հաղնալը, որից հետո տվյալ կամ մեկ ուրիշ արհեստավոր փնտրում է կենցաղին ավելի մոտ, ազգային, պեղեցիկ նոր նմուշ: Աս ոչ այլ ինչ է, եթե ոչ մրցություն: «Ապրանքային արտադրության սաղմնային ձևերի ժամանակ «տնայնագործների» միջև մրցումը առկալին շատ թույլ է, սակայն այն չափով, ինչ չափով շուկան լայնանում և ընդարձակ չլիսնելի է ընդգրկում, այս մրցումն տվելի ու ավելի է ուժեղանում՝ խախտելով մանր արհեստագործի նահապետական բարեկեցությունը, որը փաստորեն նրա մենաշնորհային գրության արգասիքն է: Մանր ապրանքարտադրողը պղծում է, որ մնացած հասարակության շահերին հակառակ, իր շահերն այս մենաշնորհային գրության պահպանությունն են պահանջում, ուստի և նա վախենում է մրցումից⁵⁶»:

Այսպիսով, շինարարը իր օրինակելի կառույցով, արհեստավորն իր նմուշը ունկլամելով, մյուսը կատարելագործելով արդեն առկա իրը, առարկան և այլն, փաստորեն շուկայում հաճախորդներ

⁵³ Ըստ հրեոյթին այս խոսքերը նշանակել են «ով լսեց՝ թող կատարի» իմաստը:

⁵⁴ ՊԻՈ, Մ. Բարադյանի նյութեր, տետր 2:

⁵⁵ ՉԱԻՈ. հեղինակի հավաքած նյութեր:

⁵⁶ տե՛ս Բ. Առաքելյան, բաղադրերը և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., 1 մաս, էջ 168: Տե՛ս նաև՝ Հ. Պատրյան, Նշվ. աշխ., էջ 293, 302:

⁵⁷ Վ. Ի. Լեւին, հրկեր, հ. 3, էջ 420:

շահելով, մրցում են միմյանց հետ. թվում է, որ համարային կարգը պետք է կանխել այդ մրցությունը, և դա այդպես էլ. նատերը բողոքում էին մրցությունը դեմ, ղրխավոր վարպետը ստուգում էր պատեւսները և հաճախ արգարացնում զրված բարձր դիւնը. Ստացվում էր երբեմն մրցություն ոչ թե 1 ման, այլ թանկ արտադրանքի համար: Անհատ արհեստավորների ստեղծած լավ արտադրանքը, զործարանային արտադրանքի բացակայության դեպքում այնքան չէր կարող լինել, որպեսզի բավարարել շուկային: Ուստի ստեղծվել էին յուրաքանչեւ մրցություն և ասլանքը սպասողին հասցնելու պահանջներ, ձեռքով արհեստավորը հետզհետե անսեռում էր համարային թույլացող պահանջները և հաշվի էր առնում սպասողի պահանջն ու իր անհատական շահը: Նույնպիսի նմանօրինակ բողոքության արդյունք են արտադրական կենցաղում առաջացած մի շարք սովորություններ, որոնք մինչև սրս էլ նկատելի են հին արհեստավորներից շատերի մոտ, ինչպես օրինակ, ծածկումատություն, զսուզամատություն, արհամարհանք երիտասարդ վարպետի գործի նկատմամբ, իրենց գործի և գործիմացության գերադասում, չափադանցություններ, փառասիրություն և այլն:

Հին հյուսն վարպետ Գ. Վիրապյանը բնագիտական աղբյուրներից իր արձանագրությունը՝ ասում է. «Մենք մեզի ուսեցնող, մեծախոս բաներ էինք պարձել, որովհետե գիտեինք, թե էլ է ու կա, էլ արհեստն է»:

Իրենանի նահանգի քաղաքների մեջ արհեստագործության բնագիտություն 1863 թ. աշրի է բնկել Ալեքսանդրապոլը: Արհեստավորական արտադրանքի բնականոր կամարը ատրեկտն կապմել է մոտ 160 հազար արծաթ ուրլի: Բամանկով ալդ կամարը արհեստավորների թվի վրա (2223), միջին հաշվով մեկ արհեստավորի արտադրանքի կամարը կապմել է մոտ 72 ու:

Եթե նկատի ունենանք, որ այդ ժամանակ Ալեքսանդրապոլի բնակչությունը մոտ 15000 էր⁶¹, ապա պարզ է դառնում բազմաթի խիստ արհեստավորական բնակչություն: Բնականաբար մոտ հարյուր արհեստ ունեցող այս քաղաքը, որն իր ժամանակին ունեցել է մեծ նշանակություն Անդրկովկասում, պետք է որ ունենար և ունեցել է նշանավոր արհեստավորներ, որոնցից միայն մի քանիսն ենք հիշատակում սուրբը⁶²:

Որպեսզի չկորչեն նշանավոր վարպետների տներները. զրազետ վարպետ Մնացական Բամբազյանը և հատկապես նշանավոր ուսուցիչ ու գրականագետ Ալ. Մխիթարյանը և ուրիշներ հավաքել են վարպետների, ղրխավոր վարպետներից շատերի կենսագրությունները: Ալ. Մխիթարյանի և ուրիշների ձեռներեցությունը ու աջակցությամբ փոստային բարտերի վրա պատկերել ու տարածել են նշանավոր վարպետների պատկերները, նրանց նշանավոր կառույցները: Հնարամիտ կոնստրուկցիաների, գործիքների պատկերներն ու քաղաքի հին ու նոր տեսարանները⁶³, Այդ նկարներից շատերը պահպանվել են, և զրանցից մի քանիսի արտանկարները կան զավառագիտական թանգարանում:

Բացի հայերից կային նաև հույն նշանավոր վարպետներ, որոնք կրելով հայկական շինարարական արհեստների ազդեցությունը, փոխադարձաբար իրենք որոշ ազդեցություն ունեցան տեղի արհեստավորների վրա: Սակայն թե՛ հայ և թե՛ ալլաղդի վարպետների գրությունը մխիթարական չէր 1830 թ. սկսած այստեղ ղաղվելով նրանք որոշ լուրիով գործ դասն: Ռուսական կառավարությունը կառուցում էր ամրոցներ, ձևավորում փողոցներ, ղրանով իսկ ստեղծելով շինարարական աշխատանքների հնարավորություն: Սակայն թե՛ հասարակական և թե՛ բնակչի ու պետական կառուցումների գործը, ինչպես նշվել է, իրենց ձեռն առան հարուստներն ու ճարտիկ գործարարները, որոնք խաբում ու շարաշահում էին անուս ու միահիտ արհեստավորներին: Մանր էր հատկապես

⁶¹ Դիսոսը՝ Լրդրումցի, Հեպոյենց վարպետ Սահակը՝ Լրդրումցի, Բամբազյան Գրիգորը՝ գլումբեցի, Լուսանեկ Աղաջանը, Մոսկենց Գրիգորը և ուրիշներ: Նրկորդ շրջանի վարպետներից՝ Պապիկ Կարապետյանը (ուստա Պապս)՝ Լրդրումցի, Անդիկան Թադեոսը՝ Լրդրումցի, Պապյան Աղաջանը, Հերիմյան Սահակը՝ Լրդրումցի, Գառնենց Անոն՝ գարսեցի, Թուրանենց Մկրտիչը, Հայրոյենց վարպետ Ասոն՝ տեղացի, տապանաբար պարապաղ, Ցուրաշյան Գնորդը (Խոխո Գնորդ), Հերիմենց Արաշամը, Գնորդենց Հովհաննես Աղաբաբյանը, Անդիկենց Ափեթը, Բամբազյան Մնացականը, որը նաև հյուսն էր, Շողանենց Աղաջանը, Ի-ին շրջանի վարպետ Մելրոն Չիլանը, Բանկիենց Խաչոն և ուրիշներ: Հյուսն վարպետներ Ջիգարյան Սիմոնն ու Հովհաննեսը (Ջիգարյան լինելը), Մանուկ Կարապետյանը (Արդար Մանուկ), Պապյան Գալիթը, Ջառիկյան Եղարյանները, Վարդապետյան Հակոբը (Կենդանակ), Բրդինբը՝ Հովհաննեսն ու Մկրտիչը, Գուրգարյան Մկրտիչը (Խելո Մուկուչ), Գուրգար Աղաբաբը, Ջուրար Միքայելյանը, Գուրգար Մարտիրոսը և ուրիշներ: (Տե՛ս Պե՛կ, Կ. Կիկոզոյանի նյութերը, տետր 1, տետր 3, Բամբազյանի նյութերը, տետր 5:)

⁶² ՀԱՅԻԿ, Կ. Գուրգարյանի հաղորդած նյութերը:

⁶³ Տե՛ս Թ. Հակոբյան, Ելվ. ալի., էջ 421.

⁶⁴ Պե՛կ, Կ. Կիկոզոյանի նյութերը, տետր 3:

⁶⁵ Ալեքսանդրապոլի առաջին շրջանի 1830 տկան թթ. նշանավոր քարտաշ Երմիազիկ վարպետներից են վարպետ

սևագործների, աշակերտների ու ենթավարպետների դրույթունը: Անագործությունը հիմնականում պարհակով էր: Կաշառակերությունը ու խաբեբայությունը կապալառուներն ու ինժեներները դրամ էին շորթում բանվորներից ու արհեստավորներից: Սոսկալի էր հատկապես հույն քար կտրող բանվորների դրույթունը, շատերը փախչում էին տաժանակիր աշխատանքից⁶²: Լավագույն դեպքում մի խումբ վարպետներ էին քիչ թե շատ ապահովված օրվա ապրուստով, մեծ մասն էլի աղաղակ դատում էր, օրվա հացը հաղիվ հանում,—նշում է հյուսն Գ. Վիրապյանը:—Ամբողջ ժամանակը անցկացնում էինք դաշխախանքում, միկիտանների, խանութների դռներին, խմում, ծխում էինք վեբջին կոպեկն ու տուն դալիս, մի խոսքով, կյանքը մե բանիմ նման չէր⁶³: Փոքր ի շատե հնարավորություն ունեցող վարպետը ձգտում էր ուսման տալ գեթ իր զավակներին⁶⁴:

Նորմալ, քիչ թե շատ բարեկեցիկ կյանք հաստատելուն սոսկալի խանգարում էին պատերազմներն ու փորձությունները: Ալեքսանդրապոլի համար հատկապես սոսկալի ու աղետաբեր եղան թուրքական վերջին երկու ներխուժումները, քարդերը, որոնք ցիրուցան արեցին բնակչությանը դեպի Կովկաս, Ռուսաստան, Մոսկվա⁶⁵: Մինչև սովետական կարգերի հաստատումը արհեստների

համար աշխատանքի քիչ թե շատ նպաստավոր տեղը մի քանի արդյունաբերական ձեռնարկություններն էին ու երկաթուղային դեպոն: Անկայն այստեղ էլ բուն էր դրած կապիտալիստական արտադրանքանակից և ցարական ինքնակալության բնույթից բխող շահագործումը, կեղեքումն ու կաշառակերությունը: Շարքային բանվորի համար փակ էին բոլոր ուղիները դեպի տեխնիկական առաջընթացը: Նախկին արհեստավորին, դյուղացուն ոչինչ չէին կարող տալ պարզունակ արտադրամիջոցներով մի քանի ձեռնարկություններ: Թե՛ բանվորի և թե՛ արհեստավոր վստակտի ու նրա որդիների համար դժվարին բարձունք էր ուսման հասնելը: Արհեստավոր բանվորի համար հնարավորությունից վեր էր այն: Եթե որեւէ մեկին էլ հաջողվում էր ուսման գնալ ու սովորել, ապա իրենց նահապետական սովորույթին հետևելով, ընտանիքի մեծերի խորհրդով ընտրում էին իրենք հոր, պապի արհեստին մոտ մասնագիտություն:

Կիսագործարանային արտադրական ձեռնարկություններում էլ զրեթե պահպանվում էին արհեստավորական շատ սովորույթներ: Առաջնություն էր տրվում վարպետի սրբուն, պատահում էին մենաշնորհի ձեռքում պահելու, բմահաճ վարձատրության դեպքեր և այլն:

Համալսարանային ու մանկապարտեզային ուղիով համալսարանությունները՝ ասնաֆները (սեմաֆ)⁶⁶, իրենց կապի մեջ ընդգրկում էին ոչ միայն վարպետներին և առարակներին, այլև աշակերտներին, ենթավարպետներին, դործակալներին: Համալսարանների մեջ էին համարվում նաև վարպետների, առարակների ընտանիքները՝ կանայք, երեխաները⁶⁷: Սակայն արտադրական տեսակետից վարպետներն էին համալսարանային հիմնական կապը⁶⁸: Կարգավորումները, աշակերտները, կանայք, ընտանիքը մասնակցում էին համալսարանական ժողովներին, համալսարանական հարցերին լուծում տալու իրավունք չունեին⁶⁹:

Ալեքսանդրապոլի համալսարանությունները նույնպես ճանաչվում էին պետության կողմից որպես ինքնավար կազմակերպություններ, որոնք իրենց շրջանակներում ընդգրկում էին միեւնույն արհեստի կամ դրադժուրքի ներկայացուցիչներին: Սրանք ճանաչվում էին հարկառու միավորներ, և պետա-

⁶² ՊԻԱ, Մ. Բամբադյանի նյութերը, տետր 3:

⁶³ ՉԱԻԱ, Հեղինակի հավաքած նյութերը:

⁶⁴ Այլ արհեստներից նշանավոր վարպետներ են եղել, որինակ, պղնձագործ Կարապետ Անտոնյանը, Միքայել Խուրդալանը (Ղալալյի Մկր), դարբիններ Հովհաննես և Մկրտիչ Խալալյան եղբայրները («Գոմեշ եղբայրներ»), դարբին անվագործ Գյանջեցի Նիկոլը, Վարդան Զոլախյանը, Լոռեցյան (Լոռն), դարբին Պապոյանները, ոսկերիչներ Գրիգոր Հակոբյանը, Տարախյանները, Աղաբաբյանները, Հարություն Զարդաբաբյանը, Նիկոլայի Նիկոլայի, չավախի Պրիգոր Հակոբյանը, դադաղներ Ավետիսը, Գալուստը, Ավետիս Կարապետյանը, ուսում (հույն) Յորոն, Կորկոտյան Ավետիսը, զերձակներ ասիական վարպետ Մանվելը, Փիլոսը, Աղաբեկ Պարսեկյանը, եվրոպական տարազի վարպետ հրեա Լեկովիլը (Լեյբովիլ), Գեորգ Առաքելոսյանը, ժամագործներ Մանուկյանները, կոշկակարները՝ Մոծակյանները, Մարտիկյան (Լոռն), հացթուխներ Քերովը և Սերովը եղբայրները, ձեփագործ Սենեքերիմը, ալվանճի (ներկարար) Քուփալյան Ալեքսանը, թիթեզագործներ Մկրտն ու Մնացականը և այլն:

Այս բազմաթիվ անուններ հայտնի են եղել ոչ միայն Ալեքսանդրապոլում, Երևանում, այլև Անդրկովկասում և նրանից դուրս շատ վայրերում: Նրանցից շատերն իրենց աշխատանքով, խորհուրդներով մասնակցում էին այլ քաղաքների չինարարական, արհեստավորական աշխատանքներին (տե՛ս ՊԻԱ, Ն. Նիկողոսյանի նյութերը, աւետր 3—7, Մ. Բամբադյանի նյութերը, տետր 2):

⁶⁵ ՊԻԱ, Ն. Նիկողոսյանի նյութերը, տետր 3:

⁶⁶ Եսնաֆ—արհեստակից:

⁶⁷ Տե՛ս Շ. Ա. Էջազարով, նշվ. աշխ., էջ 71:

⁶⁸ Տե՛ս Ք. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 73:

⁶⁹ Նույն տեղում, էջ 68:

կան սրգանները միջնորդում էին միայն թրեական սորժերին:

Համբարությունները չիմանականում ինքնուրույն, ինքնապարփակ լինելով, իրենց միության ներքին արաագրական կենցաղային կյանքը կարգավորող մասնավոր գործողություններից բացի, կատարում էին նաև վարչական գործողություններ ու պարտավորություններ⁷⁰:

Համքարություններն իրենց ներքին և արտաքին կարևոր հարցերի վերաբերյալ համարության ժողովներում, որից հետո տվյալ համքարության պատվիր լուրջ կարգով (ուստաբաշին) իրականացնում էր գրանց: Համքարության մեծության, բաղադրությունների և ցրվածության զեպում մի քանի տոնածին խումբ կրպակներ ընտրում էին իրենց ավագ վարդապետ, որն Ալեքսանդրապոլում կոչվում էր «բյոշա ուստախ»⁷¹: Ավագ վարդապետ իր շրջանակում ուներ զրեթև նույնպիսի իրավունքներ, ինչպիսին ընդհանուր համքարության պատվիր վարդապետը Այս երևույթը նկատվել է մի շարք արհեստավորական բաղադրություն և հատուկ էր ոչ միայն արհեստավորական, այլև տնտեսական և այլ համքարություններին:

Բնդհանրապես միևնույն արհեստի ներկայացուցիչները կազմում էին մի համքարություն: Բայց պատահում էր նաև, որ միանման արհեստների ներկայացուցիչներն իրենց փոքրամասնության պատճառով, ինչպես Ս. Սեդիկյանը⁷² է նշում, միանում և կազմում էին մեկ ընդհանուր համքարություն⁷³: Այսպես էր լինում տնտեսական և բաղադրական ատրիբոր զրգուպատմությունների հետևանքով, ինչպես նաև սովյալ վայրում համքարությունների հոնդես պալու, ձևավորվելու և, մյուս կողմից, բայրալվելու ու տատկանախարար վերանալու կապակցությամբ: Դուրծարանային արտադրության պայմաններում զոյուլյունը պահպանելու, այն երկուրաձգելու և այլ նպատակներով համքարներին ձևոնալու էր ավելի համախմբվել, տմրողանալ: Լանտիության մեջ, Դա հնարավորություն էր տալիս համքարներին միասնաբար հանդես գալու նաև վարչական, բաղադրական խնդիրներում, նույնիսկ բաղադրական կյանքում⁷⁴:

Որպես նոր ձևավորվող քաղաք, Գյումրի—Ալեքսանդրապոլում սկզբնական շրջանում նկատվում էին միանման արհեստների ընդհանուր համ-

քարություններ, սակայն առգէն XIX դարի 60-ական թվականներին կազմվում են բաղադրական համքարություններ, որոնցից զխավորներն իրենց մեծ ունեցել են առանձին արհեստների խմբեր՝ իրենց սովագ վարպետներով: Սակայն Ալեք. Պոլում, նախած բաղադրական արհեստների բաղադրություններ, առանձին արհեստների խիստ մասնազիտացմանը, առանձին խմբի, հյուղի անջաման, առանձին համքարություններ կազմելու ցայտուն փաստեր չեն նկատվել: Համքարության մեծ մտնող որեկ մասնագիտացված ճյուղ, ունենալով իր ինքնուրույնությունը և ազատ արտագրելու իրավունքը, հաղիվ թե շջանկանար մնալ մեծ համքարության կազմում, որն ավելի նպատակահարմար էր ինքնօգնական զործողությունների համար: Մենաշնորհի ձգանքն անիմաստ էր, որովհետև նույնիսկ արդյունաբերության զարգացման պայմաններում, զեռես կարիք էր լինում այնպիսի տարածված արհեստների, ինչպես հյուսնությունը, դարբնությունը, պղնձադործությունը, որմնադրությունը, բարտաշությունը և այլ արհեստներ: Այնուհանդերձ, համքարությունների կողքին հանդես էին գալիս միայնակ, ազատ արհեստավորներ, որոնց զեմ XIX դարի 40-ական թթ. որոշ բաղադրություն համքարները սկսում են տալքար ծավալել⁷⁵:

Ալեքսանդրապոլում եղել են արհեստավորներ, որոնք չեն մտել համքարությունների մեջ, որովհետև կենցաղում այդ արհեստի կարիքը քիչ է զդալվել: Այսպես, մեկի ծեծող վարպետների աշխատանքի կարիքը քիչ է եղել ու այն էժան է պահապանել: Վասաակ ունենալու համար նրանք շատ են աշխատել, և բանի որ վաստակը փոքր էր, սովա աշակերտներ ունենալ չեն կարողացել, հիմնականում աշխատել են միայնակ, որպես ազատ վարպետներ⁷⁶: Ինական է, որ այս կարգի ազատ վարպետը, եթե իր աշխատանքով միայնակ կարողանում էր մի կերպ ապրել, ապա հասարակական, պետական դանադան հարցերում միայնակ չէր կարող և նույնատեղահարմար էլ չէր մնալ: Իր ցանկությամբ, իրեն սովահովելու համար, նա հարում էր սրիկ համքարության, մասնակցում ավյալ համքարության ընդհանուր հարցերի քննարկմանը, որպես համքարության վարպետներին իրավահավասար վարպետ: Մյուս կողմից, համքարություններին հարում կամ ուղղակի նրանց մեջ էին մրա-

⁷⁰ ՊԻԱ, Ն. Նիկողոսյանի նյութերը, տետր 7:

⁷¹ Նույն տեղում:

⁷² С. А. Егизаров, «Զգ. աշխ.», էջ 7:

⁷³ Այդ մասին տե՛ս նաև Հ. Ղազարյան, ելվ. աշխ., էջ

⁷⁴ ՉԱԻԱ, Կ. Դուրգարյանի հաղորդած նյութերը:

⁷⁵ С. А. Егизаров, «Զգ. աշխ.», էջ 18:

⁷⁶ ՉԱԻԱ, հեղինակի հավաքած նյութերը:

նում նաև գրեթե գործարանային մակարդակի հասած արհեստների արհեստավորներ, որոնք իրենց եկամուտով ու հեղինակությամբ կարող էին միանգամայն անջատ մնալ ու դործել: Բայց նրանք առ ժամանակ նպատակահարմար էին գտնում հարել որևէ համքարության և հանդես գալով համքարության կաղմում թե՛ ներքին ինքնօգնական տընտեսական և թե՛ արտաքին հարցերում ընձեռում լին նպաստավոր դրույթուն:

Սակայն բոլոր ազատ արհեստավորները չէ, որ Ալեքսանդրապոլում հարում էին համքարություններին և դրանով որևէ արտոնյալ վիճակ ձեռք բերում: Նրանք էլ հարկադրվում էին նույն չափով և կատարում նույն պարտավորությունները, ինչ համքարության մեջ եղողները: Երևանում և Անդրեկովկասի մի շարք քաղաքներում ազատ արհեստների նկատմամբ պայքարը թույլ էր, որովհետև բացի արհեստից ու առևտրից համքարության անդամները զբաղվում էին նաև այդեդործությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկների մշակությամբ, անասնապահությամբ: Իսկ Ալեքսանդրապոլում դա բացառվում էր նախ և առաջ արհեստների լայն ընտրության հնարավորությամբ: Շատ վարպետներ տիրապետում էին երկու և նույնիսկ ավելի արհեստների ու հարկ եղած դեպքում պրաղվում նաև այլ արհեստով: Հասկանալի է, որ մրցակցության, մենաշնորհի առկայության դեպքում, այսպիսի հնարավորություն չէր լինի, իսկ Ալեք-Պոլում նույնիսկ շատ տարածված արհեստների վարպետներ, օրինակ՝ շինարարները օգտվելով մի շարք արհեստների նկատմամբ պահանջարկի մեծությամբ, ելնելով նաև իրենց աշխատանքի սեզոնային բնույթից, մասնագիտանում էին նաև այլ արհեստների մեջ:

Այսպիսի պայմաններում ազատ արհեստավորի գոյությունը չէր կարող խանդարել համքարություններին: Դեռ ավելին, կենցաղային նորամուծությունների կտպակցությամբ տոաջանում էր նոր արհեստների պահանջ, իսկ անգի արհեստավորները ծանրաբեռնված լինելով, չէին կարողանում բավարարել այն: Ալեքսանդրապոլ էին գալիս Հայաստանի, Անդրկովկասի ու նույնիսկ Ռուսաստանի, լեհաստանի և այլ քաղաքների արհեստավորներն ու խառն գրգռվելով բաց մնացած և պահանջվող նոր արհեստների տեղերը:

Թե՛ կվոր և թե՛ անդի ազատ արհեստները իրենց իսկ նպաստավորության համար կարող էին

հարել կամ մտնել որևէ համքարության մեջ և ընդհանրացան:

Բայց որքան էլ որ ազատ էին կամ որքան էլ որ առանձնակի պատահական բնույթ էր ունենում նրանց նկատմամբ ճնշումը⁷⁸, Գործարանային արտադրության մեծացման, համքարությունների քայքայման հետևանքով, ինչպես ազատ արհեստները, այնպես էլ ընդհանրապես որոշ արհեստներ աստիճանաբար կուլ էին գնում մրցակցությանը, ենթարկվում մենաշնորհին: Միայն թե արևելյան կենցաղի բաղմապիսի պահանջները հնարավոր չէր մասսայական տրտադրանքով բավարարել, և տրհեստները կարողանում էին իրենց սպառողը գտնել թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում:

Ինչպես հայտնի է, համքարությունների համար կարևոր էր նաև նրանց մեջ մանողների աղագությունը, դավանանքը, ինչպես և համքարության անդամների հավատը իրենց սուրբ հովանավորի նկատմամբ: Նույնիսկ ուշ շրջանում, Ալեքսանդրապոլում արհեստավորները պահպանել են հովանավոր սուրբ նախահայրերի («փիղ») հավատքը: Նրանց համքարակտն դորդների վրա պատկերված էին սրբերի, սրբություն համարվող աշխատանքային գործիքների պատկերներ: Բացի դանսզան առներին մասնակցելուց, այդ դորդներով ալեքսանդրապոլցիները դիմավորում էին նաև անվանի մարդկանց: Սուրբ նախահայրերն տյատեղ էլ եղել են գրեթե նույնը, ինչ որ ընդհանրապես Հայաստանի մյուս վայրերի արհեստավորներին: Այսպես, քարտաշ դրմնադիրները՝ Արեւը (Հորեթ-թուրեթ), հյուսներինը՝ Հայր Հովսեփը, դաբրիններինը՝ Դավիթ Մարգարեն և այլն⁷⁹, որոնց վերաբերյալ կան դանաղան ավանդություններ⁸⁰:

Արհեստավորական համքարությունների գրեթե սկզբնավորումից ստեղծված դանաղան կանոնների ու օրենքների մի մասը կոչված էր կտրգուկանոն հասաաաեղու համքարության ներսում և համքարությունների միջև, իսկ մյուսը՝ տնաեսական և քաղաքական դժվարին պայմաններում

⁷⁸ Տե՛ս С. А. Езуазапов, «24. աշխ., էջ 21:

⁷⁹ ՊԻԱ, Մ. Թամրազյանի նյութերը, տետր 4, Ն. Նիկողոսյանի նյութերը, տետր 7:

⁸⁰ Գրակ կարողները ենովքին էին նախահայր ճանաչում, որովհետև նա էլ Ազամի պես, չխաբվելու համար, միդդ լեր ուտում և որպեսզի գրանք ծառերից ընկնելիս զլորվելին ոտքի տակ ու ճգմվելին, սրածայր զգակ էր գնում: Մի անգամ սատանան գայթակզության համար միդդ լ գրում գետին, բայց ենովքը այն ոտքով ճգմում է, և սատանան ձխի նման գուրս է գալիս մրդի միջից: Սա պատկերված էր նրանց համքարական դրոշի վրա: (ՊԻԱ. Ն. Նիկողոսյանի նյութերը, տետր 7):

⁷⁷ Տե՛ս Բ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 84:

Համաքարոթյունների գոյությունը մի կերպ պահելու Վրաց մեծ կարևոր էին ինքնօգնությունը, փոխադարձ օգնությունը, որոնք հնարավորություն էին տալիս պայքարելու ընդադրկման, Բարկերի, տուրքերի, գների բարձրացման, պարտավորությունների ավելացման դեմ⁸¹։ Հոգ տանելու ընակչության համար, կատարել զանազան ինքնօգնական գործեր, օրինակ՝ փրկավճար, թաղում, տաճարների կառուցում, հանապարհաշինություն, փոխադարձ կառուցումներ և հասարակական այլ գործեր։ Օգնում էին ղեկավար պատահարի, աղետի, հիվանդության մամանակ։ այս ամենը կատարվում էր թե՛ զրամով և թե՛ աշխատանքով։

Աշխատանքային կենցաղի պահպանման հետևանքով, համաքարոթյունները պահպանում էին բարոյական որոշ նորմաներ։ Բարոյապես անվստահելի, «վատ հումորով» ունեցող մարդկանց հանդեպ եղել է պաշտպանություն, խուսափողական, երբեմն խիստ վերաբերմունք։ Այսպիսի մոտեցում XIX դարի երկրորդ կեսին պատկերվել է Ղարսում, Ալեք-Պոլսում, Ռիդիսում, Երևանում, Ախալքալաքում և այլուր⁸²։

XIX դարի ուսումնասիրողները շնայած դավաճանությանը ևն խոսում ընդհանրապես համարական կազմակերպությունների մասին, աշխատելով կանոններ պահպանելու վերաբերյալ, բայց մինչ այդ արդեն սկսվել էր բայրայումը և քանի որ ընդհանրապես համաքարական կանոններն ու սովորություններն այս անհատականության շնորհիվ կենսական այն նշանակությունը, ինչ անցյալում, ուղիղ գոյնցառություններն ու խախտումներն ավելի շատ էին։ Դա տվելից ցայտուն երևում է Ալեքսանդրապոլում։ Արհեստավարական գործողության բաղադր լինելով հանդերձ, շատ համաքարական կանոններն ու սովորություններն այնպիսի պահեց էին առնվում, որն ավելի նկատելի էր գոյություն հատկապես կապիտալիզմի ներթափանցման և համաքարությունների արագ բայրայման պայմաններում։

Ալեքսանդրապոլի համարական ինքնօգնական գործունեության մեջ մտել են ղանադան կարիքներ հողալը՝ օգնություն համաքարության տուժած տնտեսներին, օգնություն միմյանց՝ ապառիկ հումք ձեռք բերելու համար, ղեկավարության ղեկավարում, տնտեսական, շուկայի ուղղակի օժիտը պատրաստելիս, փոխօգնություն վարպետների միջև ղանադան արտադրական կարիքները հողալու ղեկավարում, նոր վարպետներին դուրծի ղեկիս, կրպակ վարձելիս և այլն։ Աշխատանքով կամ զրամով օգնություն՝

հասարակական գործերում, շինություններ կառուցելիս և այլն։ Հասարակական օգնության օրինակ է Ալեքսանդրապոլի համաքարությունների կողմից կազմակերպված աղքատանոցը (1560—1896 թթ.)։

Համաքարությունների աշխատանքային կենցաղում փոխօգնության ձևերից մեկն է եղել համաքարության ներսում միմյանց ձեռք բռնելը՝ վարպետ Ս. Չալախյանը պատմում է, թե ինչպես սովոր տարիներին, երբ բոլորովին հանգել էր իր հոր՝ Չալախյան վարպետի զարբնոցի ծուխը, հումքի և վառելիքի ոչ մի հույս չի եղել, հանկարծ մոլորված ընտանիքի տան դռան առջև կանգնում է երկու ֆուրդոն՝ բռնված երկաթով և փախած իրավ։ Նրանք «ծիսեցնում են» ղործը, փրկվում սովամահությունից, երկար ժամանակ շիմանալով բարեկարգ վարպետի անունը⁸³։

Աղղաղական նյութերի մեջ կան այգալիսի ղեկավարի բաղամալիվ օրինակներ։ Օգնություն է ցույց սուվել նաև անհաշտության հանդիպածին, սնանկացածին։ Օգնել են նույնիսկ այնպիսի վարպետների, որոնք իրենց ոչ խելացի արարքով, իրենց հանցանքներով էին «էլ օրին հասել»։ Աղղալիսի ղեկավար օգնում էին առաջին անգամ, եթե ղա չէր օգնում տուժածին ոտքի կանգնելու, օգնում էին երկրորդ անգամ, երրորդ անգամ, իսկ եթե այդ անգամ էլ նա անկարող էր լինում վերականգնվել՝ «խելիքի ղալ» կամ շարաշահում էր վարպետների մարդասիրությունը, ապա չորրորդ անգամ «լիբել ու խայտառակել են», որ նա անշնորհ է, ձրիակեր, ուրիշի հաճիկն ապրող⁸⁴։

Չալախի է եղել կախումը միմյանցից՝ աշակերտների մեծ հարգանք էին տալիս ևն թավարպետների ու վարպետների նկատմամբ, վերջիններս իրենցից վեր կանգնածի, միմյանց և ընդհանուր ղլխավոր վարպետի հանդեպ միմյանց ղիմել են «եղրուր» անվանելով, շեն համարձակվել շսել իրենց վարպետի խոսքը, եթե նույնիսկ բանհին պարական վարպետը իր շնորհքով աչքի բնկնելու առաջ անցներ վարպետությանը։ Գլխավոր վարպետը և վարպետները եթե իրենց մեջ ընդունում էին այդ բանը, ուղիղ որոշ հարգանք ցույց տալով երիտասարդին, աշխատում էին երես շտալ նրան։ Բարոյականությունը բարձր պահելու, երես շտալու անվան տակ Ալեքսանդրապոլի արհեստավորները աշխատել են որոշ իմաստով շահագործել աշակերտներին ու ևն թավարպետներին։

⁸¹ Տե՛ս Թ. Զակոբյան, եղվ. աշխ., էջ 63—64.

⁸² Տե՛ս Թ. Զակոբյան, եղվ. աշխ., էջ 64, 72, Ե. Езуа-
запов, եղվ. աշխ., էջ 47, 51—52, 58.

⁸³ Գլխ. ն. Նիկողոսյանի նյութերը, տետր 7.

⁸⁴ ՉԱԽԻ, հեղինակի հաղթած նյութերը.

⁸⁵ Նույն տեղում.

Ապրուստի նուսալի միջոց դառնալով, արհեստը իրեն է ձգում յուրաքանչյուրին, ով ուզում էր «փեշակի» տեր դառնալ: «Փեշակը» դիտվում էր որպես թուկի բիլաղուկ⁸⁶: ապրուստ ունենալու համար Ուստի Ալեքսանդրապոլում բնակչության մեծ մասը ընդգրկված էր արհեստների և առևտրի մեջ, միայն փոքր տոկոսն է զբաղվել այլ գործերով, ընդ որում այդ տոկոսի մեջ են մտել նաև ծառայողներն ու հողերականները⁸⁶:

Արհեստը ապրուստի և զբաղմունքի հիմնական միջոց լինելով, իր դժվարությամբ ու ծանրությամբ ապրուստ հայթայթելու հեշտ միջոց չէր: Արհեստների բազմադասության հետ մեկտեղ, սոսկալի շատ էր շարշարանքը: Աշխատում էին ամբողջ օրը, մինչև ուշ գիշեր, «կերել են իրենց դառը քրտինքը»: Այդ է պատճառը, որ արհեստավորը, մանավանդ լավ արհեստավորը, ունեցել է մեծ պատիվ: Նա դնահատել է աշխատանքը, իմացել նրա արժեքը: Շատ-շատերը չեն դիմացել ծանր աշխատանքին, հեռացել են տվյալ արհեստից, սակայն պատիվը, «թափին ու նամուսը» պարտավորեցրել են վերադառնալ ու շարունակել այն, որովհետև առանց փեշակի հաց չէր ունենա⁸⁷: Հասարակական կարծիքը թույլ չէր տալիս խուսափելու սկսած դործից, իսկ ծայրահեղ դեպքում փոխում էին արհեստը «էդ փեշակի մեջ շնորհ չունենալու» պատճառաբանությամբ: Աշխատանքը արհեստավորին դարձնում էր պատվավոր մարդ: Աշխատանքը պատվի դործ էր: Նույնիսկ չնչին վաստակ բերող մեխ ծեծողները մեծ պատիվ էին վայելում արհեստավորների մեջ: Պատմում են, որ մեխ ծեծողները որպեսզի ձիու, ավանակի պայտի մեխերով լցնեն բաժակը, սրով չափվում էր նրանց չնչին աշխատավարձը, աշխատում էին մի ամբողջ օր: Այնպես էր լինում, որ նրանք նախաճաշում էին աշխատելով: Միալար, երկար աշխատանքից, օրինակ՝ մեխ ծեծող (միւճի) Դավթի աջ ձեռքի մատները երկար ժամանակ մուրճ բռնելուց այնքան են կոշտացել, որ այլևս չեն բացվել: Նա մուրճը մտցնելիս է եղել կորացած մատների արանքն ու այդպես աշխատել: Այդպիսի արհեստավորը չէր կարող հարգանք ու պատիվ չունենալ Ալեքսանդրապոլում⁸⁸:

Ալեքսանդրապոլում նույնպես համքարական կանոնների ու սովորությունների մեջ որոշակի նշանակություն է տրվել արհեստի, իսկ այնուհետև

համքարության մեջ նոր մարդիկ ընդունելու կարգին: Այդ կարգը հիմնականում արևելյան, հայկական արհեստավորական կյանքից բխած լինելով, այստեղ որոշ չափով փոփոխվել է: Ալեքսանդրապոլը ավելի ուշ առաջացած արհեստավորական աղաք էր և որոշակիորեն կրում էր ինչպես նոր միջավայրի, այնպես էլ մեծացող արդյունաբերության սզդեցությունը: Արհեստավորական սովորությունները վերափոխվում էին և համքարությունների հետզհետե քայքայումով դառնում ավելի պարզունակ՝ հաճախ կրելով նույնիսկ ձևական բնույթ:

Ակներև դարձնելու համար դիմենք համքարության մեջ առաջին աստիճանին՝ աշկերտությանը (կամ աշակերտությանը) Ալեքսանդրապոլում: Հայտնի է, որ Անդրկովկասի տարբեր քաղաքներում աշակերտության ժամկետը տարբեր է եղել: Դա կախված էր արհեստի դժվարությունից, աշակերտի ընդունակությունից, վարպետի րարելիզությունից, երբեմն նաև աշակերտին տրվող վարձից: Եթե այն բարձր է եղել, ուսման ժամկետը աշխատել են կրճատել: Սակայն հիմնականում աշակերտության ժամկետը կախված էր տնտեսական իրավիճակից: Եթե, ասենք առաջին անհրաժեշտության ապրանքները բարձր դին են ունեցել, ապա վարպետը իր ծախսերը ծածկելու և որոշ օգուտ ունենալու համար երկարացրել է աշակերտության ժամկետը, օրինակ, Թիֆլիսում, Ախալցխայում⁸⁹:

Այսպիսով, շահագործումը ավելի հեշտ կլինելու աշակերտների թվի ավելացումով, լայց անդրկովկասյան համքարություններում անդամների ստացած հումքը և արտադրական հնարավորություններն այնքան փոքր էին, որ դործը լիակատար տանելու համար բավարար էր միայն մեկ տշակերտի ու մեկ ենթովարպետի մասնակցությունը: Համքարությունների հենց բնույթը կաշկանդում, սահմանափակում էր, ասենք՝ հումքի քանակն ու արտադրանքի վաճառքը, պրանով իսկ սահմանափակելով աշխատողների թիվն ու արտադրության ծավալումը⁹⁰, Իհարկե, այս սահմանափակումը կատարվում էր անուղղակի ճանապարհով, ու շատ անգամ հումքի և պատվերների առատության դեպ-

⁸⁶ Տե՛ս С. А. Егуазапов, նշվ. աշխ., էջ 78:

⁸⁷ Նույն աեղում, էջ 88—91, Արեմայան Հայաստանի արհեստների և համքարությունների հիմնական բնույթի մասին 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբին, տե՛ս նաև Վ. Պաբաումյան, Հայ ժողովրդի պատմության, պրակ 7, Ա. Ս. Համբարյան, Արհեստները Արեմայան Հայաստանում 19-րդ դ. վերջին քառորդում և 19-րդ դ. սկզբին, ԳԱ «Տեղեկագիր», 1965, № 13, էջ 54—62 և ուրիշե:

⁸⁸ ՊիԱ, Ն. Նիկողոսյանի նյութերը, աեար 3:

⁸⁷ ՀԱԻԱ, հեղինակի հավաքած նյութերը:

⁸⁶ Նույն տեղում:

բում գրեթե վերանում էր. Բայց ՆԼՀ դարի երկրորդ կեսում Անդրկովկասի արհեստավորական բաղադրանքներում արհեստոր սրտը զարգացում ապրելով հանդերձ, սկսեց բախվել ծավալվող արդյունաբերության հետ և մնաց սահմանափակ:

Նկատի ունենալով այդ սահմանափակությունը, վարպետները աշակերտության էին վերցնում նախ և առաջ իրենց որդիներին, թոռներին, ազգականներին և նոր սիայն ուրիշներին: Իհարկե, արհեստների մասնագիտությունը չի սլայմանավորվում միայն հորից որդուն անցնելով, սակայն դարերի խորիքից եկող ավանդույթը հիմնականում փոխանցվել է սերնդից-սերունդ նախ և առաջ անմիջական մասնագետների միջոցով: Որոշ արհեստների մասնագետները տղաներին սովորեցնում էին իրենց արհեստները, որոնց մասնագետները անցնելով:

Արհեստավորների մեջ ավանդույթ է եղել անսլայմանորեն մասնագետին իր արհեստի շարունակողը դարձնելը, և դուրս գրանից է բխել այն կանոնը, որ նույնիսկ աշակերտների սահմանված բանտի ունենալուց հետո էլ Անդրկովկասում վարպետին իրավունք է վերապահվել ուսուցման վերջինը որդուն, թոռին և նույնիսկ առաջին կնոջ որդուն⁹¹:

Նոր մարդու մուտքը համարության մեջ, նրան արհեստ սովորեցնելը չէր դիտվում որպես հասարակ բան, այլ սուրբ մասնագիտություն: Այլ իսկ պատճառով սրբից որդուն ընդունելիս էլ որոշ ձևականություններ կամ ծեսերով նա նույնացվում, նմանեցվում էր իսկական մասնագետին: Ս. Շիրազյանը նշում է, որ Անդրկովկասում լայն տարածում է ստացել համարության ղեկավարների տղան վարպետի երդումը՝ աշակերտին շղանադանել հարազատ որդուց: Ուսման սլայման կնքելիս, աշակերտի ծնողները, հարազատները կամ հովանավորները ասել են, «մեր որդուն հանձնում ենք քեզ, իսկ քեզ՝ առտծուն: Որդու միսը քեզ, ոսկորները մեզ, սլատծիր նրան ծուլության, թափվելիս ծուլության, շլսելու համար, սլատծիր իրիստ... Միայն թե արհեստ սովորեցրու: Վարպետը սլատաախանել է. «Բող ահնդ դատաստանին առտծու առաջ նրա մեղքերը թափվին իմ դրվիին, եթե ես նրան ղանաղանեմ իմ հարազատ

որդուց և եթե սովորեցնեմ իմ արհեստի բոլոր գաղտնիքները»:

Սլայման կապելը աշակերտ ընդունելիս սովորարար կատարվել է բանավոր ձևով և քանի որ այդպիսի պայմանը կարող էր թախտվել կամ չիրականացվել, հրավիրում էին ու միայն վարպետաց վարպետին (ուստարաուն) և համարության ղեկավարներին, այլև մի երկու ճաստվածավախ վարպետների: Որպես հաստատում իրենց երդման՝ ձեռք-ձեռքի են խփել ու մի բուռ հող ցանել⁹²:

Ալեքսանդրասլուում, սկզբնական շրջանում, երր դեռ արհեստավորները քիչ պատվիրատուներ ունեին, խուսափում էին արհեստի մեջ կողմնակի մարդ ընդունելուց: Արհեստը խիստ ժառանգական էր: Ասկայն ահող սլահանջները միայն ժառանգները չէին կարող ղավարարել, և վարպետը սեւ-դործներ ու մշակներ էր ընդունում նաև ուրիշների: Համարության ղեկավարները դրան թշնամարար էին նայում, իսկ եթե դրանց թիվը հասնում էր 4—5-ի, արդեն ղիտողություն էին անում: Անվանի քարտաշ-պատշար (յափուջի) Մ. Թամրազյանն իր հիշողություններում դրում է, թե երր ինրր աշակերտների թիվը հասցրեց հինգի, ուստարաշի Աարդիսը և օղնականներ Մկրտիչն ու Հովհաննեսը ղիտողություն արեցին, թե՛ «հին ուստեքի հացը ղկտրեմ»⁹³: Խիստ հետեւելով ժառանգականությանը, այնուամենայնիվ, կարելի է նկատել, որ դարդացող արհեստների համար 2—3 աշակերտ ունենալը սովորական էր, իսկ սահմանափակումն էլ բխել է հենց համարական արհեստի էությունից, նրա հնարավորություններից:

Չնայած արհեստների աշխուժացմանը, Ալեքսանդրասլուում դրանք սերնդ-սերունդ հիմնականում փոխանցվել են մասնագետներ, նույն Մ. Թամրազյանը վկայում է, որ «Եթե հարցնես Անդիկենց Գերասիմին, կսեն, որ ընդ Անդիկենց Ավետիսի ողեն է, յափուջի Թաթիսի թուր: Թամրադենք քարտաշ Գարեգինին հարցնես, կսեն՝ քարտաշ Մացակի տղեն է կամ Թամրադենց յափուջի Սահակի թուր»⁹⁴: Ասկվել հավաստի լինելու համար բերենք Մ. Թամրազյանի կաղամած⁹⁵ քարտաշ-պատշար վարպետների աղյուսակը, որը ճշատմների է ենթարկվել մեր կողմից:

⁹¹ Նույն տեղում, էջ 98:

⁹² Նույն տեղում, էջ 99:

⁹³ Գիւլ, Մ. Թամրազյանի նյութերը, տետր 3:

⁹⁴ Նույն տեղում:

⁹⁵ Նույն տեղում:

⁹¹ Տե՛ս Մ. Մ. Մարր, Кавказский культурный мир и Армения, II, 1915, стр. 17.

⁹² Գ. Ա. Էսազարով, 224. աշխ., էջ 94:

Ընդգրկված են 1830—1940-ական թվականների որմնագիր վարպետները

Անդրկենց տնից	Թամրադենց տնից	Հարոյենց տնից	Հաջի Ուկանենց տնից	Մանուկենց տնից	Կոստանյան տնից
Թաթոսի (մահացել է 1899 թ.) որդիք	Գրեղորի (մահացել է 1866 թ.) որդիք	Մկրտչի որդիք	Ոսկանի որդիք	Մարկոսի որդիք	Վարպետի որդիք
Ավետիս (ծնվ. 1858) Սոս Սեդրակ Մխակ Արեթ Գերասիմ Ավետիքի Ծնոթ Սոս Վահան Սոսի Թաթոսի եղբոր որդիք Գևորգ Նիկոլա (11 վարպետ)	Պապատուր Գևորգ Մակար Սահակ (Գրեղորի եղբայրը) Սահակի որդիք Մնացական (ծնվ. 1858) Ալեքսան Հովհաննես — Գետրոս Պապատու- րի Գրեղոր > Խառազ > Գևորգ Մնացականի Գևորգ Գետրոսի (13 վարպետ)	Գևորգ Գրոս Պետրոս Գրեթ Ասո (Մկրտչի եղ- բայրը, 1840—1908) Ասոյի ուսույթ Արսեն Միսոն Հովհաննես (Մկրտչի եղբայրը) Հովհաննեսի որդիք Պապատուր Մարտիրոս Գարեգին Վաղինակ Հովհաննես Գրեղորի Միսոն > Մկրտչի Գրոսի (16 վարպետ)	Մկրտչի Կարապետ Մարտին Հակոբ (տուկաս Ծակո) Նրա որդիք Արազ Արազամ Ալեքսան Սեդրոս որդիք Մխակ Հեռապետ Գևորգ — Վարդան Մկրտչի Նիկոլ > Հարություն > Ոսկան > (12 վարպետ)	Մկրտչի Հովակիմ Հակոբ — Աթո (եղբայրը) Աթոյի որդիք Կետրոս Կարապետ Գևորգ — Վարդան Մկրտչի Նիկոլ > Հարություն > (11 վարպետ)	Պապատուր Սոսան Ալեքսան — Գետրոս (եղբայրը) Պետրոսի որդիք Կոստան Գևորգ Գարեգին Ավետիք — Գեղամ Գետրոսի (10 վարպետ)

Մի այլ վկայություն. Ն. Նիկողոսյանը թվելով անվանի հյուաններին, որոնցից շատերն աշխատել են իրենց որդիների կամ ևղրայրների հետ, ավտորտում է իր միաքը. «Այսպես էր, սովորեցնում էին որդիներին, որ նրանք իրենց օղնեն, հեաադայում արհեստի տեր դառնան, ապրուստի միջոց ունենան»⁹⁸:

Ուշադրավ է այն փաստը, որ Ալեքսանդրապոլում շատ վարպետներ իրենց «պապական» արհեստի մեջ ըավական հմանալուց հետո վարպետ են ձեռնադրվել ոչ այդ, այլ մեկ ուրիշ արհեստում: Սովորույթ էր որդիներից մեկին կամ երկուսին, որոնք, առնչվելով «պապական» արհեստին, որոշ հմանություն արդեն ունենում էին, աալ աշկերտության այլ արհեստի մեջ, և փոխադարձաբար աշկերտության վերցնել ուրիշ արհեստի անբ վարպետի որդուն կամ աղդականին: Վարպետ Մ. Թամրադյանը, բացի քարաաշ-որմնադիր լինելուց, ևղել է նաև հմուա հյուան և տիրապետել է էլի մի քանի արհեստի: Վարպետ Զպլախյան Վարդանի հայրը որմնադիր էր, սակայն ինքը հայտնի է որպես անվաղործ դարբին: Բայց որքան էլ համաբարությունները աշխատանքի իրենց ձեռքը պահել տվյալ արհեստի մենաշնորհը, հեաեին ժառանգականությանը, քաղաքում արհեստների մեջ ղարդանում էին առանձին ճյուղեր, հանդես

էին դալիս նոր տրհեսաներ, աշխատանքի ծավալը պահանջում էր աշկերտներ ընդունել, ավելացնել արհեսաավորների թիվը: Այդուհանդերձ, ինչքան էլ վարպետ ուրիշին իր որդու տեղ ընդուներ ու արհեսա սովորեցներ, նրա նկատմամբ կիրառում էր համաբարության մեջ գոյություն ունեցող ամեն մի կարգ և ղղուշտկան միջոց, որն, տնկասկած, միշա չէ, որ ընդունվողները կաըողանում էին սա-նել:

Հայտնի է, որ Անդրկովկասի համաբարություններում աշկերտի համար սահմանված է ևղել «փորձնական շրջան», որը տարրեր տեղերում տտրբեր աևողություն է ունեցել՝ վեց շաբաթից մինչև աաան ամիս: Աշկերտը «տան սղա» դառնալով, ընդունվում էր ընաանիքի անդամի պես և պարտավոր էր կաաարելու այն ամենը, ինչ տանսերը պահանջեր, բացառությամբ այն սև աշխատանքի,—նշում է Ս. Սղիաղարովը,—որը սովորաբար ընկած էր լինում տնային ծառայողի ուսերին⁹⁹: Սակայն հեաաղոաությունները ցույց են աալիս, որ սև աշխատանքն էլ շատ հաճախ և ավելի շաա ընկած էր նոր ընդունված աշկերտի ուսերին և այդ բացառությունը, որ Ա. Սղիաղարովը նշում է, ըսա երեույթին շեշտված է հղինակի ժամանակաշրջանում համաբարությունները պահպանելու անհրաժեշտությունից: Հեղինակը և ընդհանրապես

⁹⁸ ՊիԱ. Ն. Նիկողոսյանի նյութերը, աևար 3:⁹⁹ Տե՛ս С. А. Езуицаров, նշվ. աշխ., էջ 102:

Քիշիյի համարություններով գրադված բոլոր հեղինակները, ի պաշտպանություն համարությունների գոյատևման, շատ երեւոյթներ մեկնարանել են որոշ շափով դրականորեն չափազանցված, երբեմն շրջանցելով այնպիսի հարցեր, ինչպես Կրիսակ համարություններում գոյություն ունեցող շահագործումը, մենաշնորհ իրենց ձեռքում պահելը, հետամնացությունը և այլն, որոնք բխում էին միջնադարյան համարությունների բուն էությունից:

Համարությունները ուսումնասիրողներից Վ. Արարհամյանն իր դրսում ուղղակի նշում է, որ աշակերտները, բացի իրենց անմիջական մասնագիտությունը սովորելուց, վարպետի մոտ կատարում էին նաև տնտեսի ծառայությունը¹⁰⁰ (ընդգծումը մերն է—Վ. Ս.): Այդ ևն ապացուցում նաև Ալեք-Պալին վերաբերող նյութերը:

Բ. Թամրազյանի հուշերում նշվում է, որ ինքը վարպետի մոտ աշակերտելիս, զանազան տնային մանր-մունր դարձերից բացի պարտավոր էր շարավր մեկ անգամ վարպետի երկսաներին ուղեկցել բազմիք դառնալու մեծ ու փոքր ամանակներ հետևելը¹⁰¹:

Սի այլ նյութից երևում է, որ աշակերտը դերձակի մոտ սկզբնական շրջանում արհեստից պրեքն շտա հետո է պահվել, կատարել է տնային ծառայի գեր Ջուր է կրել, փայտ կտարել և այդ բոլորի տրանսում երբեմն ասեղ բռնել կամ եղբայր տնել սովորել¹⁰²:

Աշակերտի և տան ծառայի տարբերությունը սկզբնական շրջանում եղել է միտյն այն, որ աշակերտը կատարել է նաև արհեստին ուսնչվող որոշ դարձեր, իսկ իրտկանում, ինչպես ուսումնասիրողներն էլ նշում են, նրանք դառնում էին նույն վիճակում, և եթե ծառայողները որոշ վարձ էին ստանում, ապա աշակերտները «չաղիրդանեա» (աշակերտի աշխատավճար, չաղիր՝ աշակերտ, չլանե՝ վճար) էին ստանում, որի չափը վարպետի հայեցողությունով էր¹⁰³: Այս վճարն էլ շատ հաճախ աշակերտները աշխատում էին կուտակել՝ հետագայում համարություն իսկակուն անգամ դառնալու զանազան ծախսերը հոգալու համար¹⁰⁴: Սովորաբար այդ գումարի մեծ մասը, ինչպես նաև ենթավարպետների աշխատավարձի մի մասը խնայվել է ձեռնարկուման ծախսերը հոգալու համար Ալեք-

հանդրապառլում տարբերությունը եղել է այն, որ ԼՅԵ արհեստանոցում առևա էր երկու վարպեա, ապա աշակերտը ստանում էր արդեն շրջակի վարձ:

Փորձնական շրջանում մեծ աեղ է տրվել աշակերտի ուղիմությունը: Տոկունությունը որոշելու համար Ալեքսանդրապոլում աշակերտներին սկզբում հանձնարարել են ծանր աշխատանքներ, օրինակ, հյուսնը բավականին հաստ դերան է տվել ու պահանջել, որ ձեռքի սղոցով աշակերտը մեկ շարաթում այն կտրի: Դերձակը կզրակարեր է հանձնարարել, սխալի դեպքում ստիպել է ամբողջ աշխատանքը նորից կատարել: Նման փորձությունները երբեմն հուսահատեցրել են աշակերտներին, ուստի երբեմն ղուրս են եկել մեկ արհեստից՝ բախտը փորձելու ուրիշ արհեստի մեջ:

Հեղհանրապես այն արհեստներում, որոնց նկատմամբ ձդտումը մեծ էր, վարպետները շեն շտապել պայմանադրության մեջ մտնել, աշխատել են փորձնական շրջանում ճանաչել աշակերտին: Իսկ այնպիսի արհեստներում, ինչպես օրինակ՝ կաշեղործությունը, կոշկակարությունը և այլն, որոնք ծանր ու տհաճ աշխատանքներ էին, դժվար է եղել աշակերտ պահելու: Շատ-շատերը խուսափել են, դուրս եկել աշակերտությունից¹⁰⁵, Բնականարար այսպիսի արհեստների վարպետները աշխատում էին շուտ մտնել պայմանադրության մեջ, առանց մեծ տեղ տալու փորձնական շրջանին:

Ուրույն աեղ էր բոնում աշակերտների ազատ-տիրակությունը: Վարպետները աշակերտներին

¹⁰⁰ Պատմում են, որ դարբին վարպետներից մեկը աշակերտից ղուր է ուզում: Սա չբաժանը վարպետին հանձնելիս բաժակը բռնած է լինում բռնակից: Վարպետը վերցնում է բաժակը և դրան ամրացնում է երկրորդ բռնակը: Հաջորդ սեղամ ղուր ուզելիս աշակերտը բաժակը տալիս է երկու բռնակից բռնած: Վարպետը կպցնում է նաև երրորդ բռնակը, և երբ այս անգամ էլ աշակերտը ղլխի յի բռնկում, Բն բանն ինչ է, նրան խիստ ծաղրում են, որը դառը գաս է լինում աշակերտի համար:

Մեկ ուրիշ աշակերտի (որը երկարահասակ է եղել) ուղիմությունը փորձելու համար վարպետը լրջորեն խնդրում է կանգնել բուրայի վրա ու կրել կրակին: Սա կրում է կրակին և կատարել ղլխի է բռնկում միայն այն ժամանակ, երբ փոր-սով ուժեղացնում են կրակը: Նա ղուրս է Բոլում կրպակից և այլն յի համարձակվում երեալ այնաեղ, վախենալով ծաղ-բանքից, Բն աղ բուրի խելք էլ հավարձ, նոր արի ըստեղզ (ՏԼ՝ս շԼԻԼ, հեղինակի հավաքած նյութերը): Ուշա-դրավ է, որ ուղիմության նմանօրինակ ստուգումների սո-վորություն է եղել նաև սկեսուրների կողմից նորահարսերի նկատմամբ: Լենինականցիները չըշում են նման շատ զեպքեր:

¹⁰⁵ շԼԻԼ, հեղինակի հավաքած նյութերը:

¹⁰⁰ Վ. Արարհամյան, նշվ. աշխ., 1956, էջ 247:

¹⁰¹ ՊԻԼ, Բ. Թամրազյանի նյութերը, տետր 1:

¹⁰² շԼԻԼ, Հեղինակի հավաքած նյութերը:

¹⁰³ ՏԼ՝ս Շ. Ա. Բաաթրոս, նշվ. աշխ., էջ 118:

¹⁰⁴ ՏԼ՝ս Կ). Փ. Ասերթոս, նշվ. աշխ., մ. 11, էջ 9:

պատիարակում էին իրենց իմացած կրոնական պատկերացումների ոգով՝ օրինական ընդհանուր լիցենզիայի, «Սահմանափակում», «Պղնձե քաղաք», «Ծոթ իմաստուն» գրքերից և այլն: Դաստիարակության մեջ էին մտնում նաև ղանաղան մարմնական պատիժները, ծնծր: Անդրկովկասյան համաքարություններում սովորարար պատիժ կիրառելը աշակերտների նկատմամբ դիտվել է որպես «օգտակար», «բարեգործական» միջոցառում¹⁰⁷:

Ալեք-Պոլի համաքարություններում էլ պատիժներ եղել են, բայց ոչ շատ խիստ մարմնական պատիժ: Ինչպես վկայում են տարեց վաճառները, աշակերտներին քամահրել են, ապակե, առ ժամանակ դոժից գուրս արել: Շատ սովորական ու տարածված է եղել հայհոյանքը, և դա համարվել է կրթելու ընդունված միջոց:

Պատմում են, որ ուշիմ, «խելքին ղոռ տվող» աշակերտին մեծ տեղ են տվել, բայց վարպետներն ընդհանրապես մեծ դժվարությամբ են իրենց գաղտնիքները և վարպետությունը սովորեցրել մեկ ուրիշին, Ալեք-Պոլում ընդունված է եղել «հեշա շտովորեցնել գիտեցած գործը»¹⁰⁸: Շատ է սլատահել, որ վարպետները մահացել են, արհեստի գաղտնիքները չբացահայտելով: Մոռացվել են շատ ներուժայիններ: Բայց եղել են աշխատաց, ուշիմ աշակերտներ, որոնք աշխատել են գոռ աշխույժ բացել են պաղանիքը, վերականգնել կորստյան մասնված շատ գաղտնիքներ:

Աշակերտին ուսուցումը փորձական ջրջանից հետո շարունակվել է ըստ պայմանագրության: Պայմանագրության խախտումը, աշակերտին շուտ կամ ուշ ձեռնադրելը կախված է եղել վարպետի խելիքից և համաքարության մեջ գործող կարգերի խտությունից և աստիճանից:

Աշակերտները, ինչպես նշվեց, վարձատրվել են: Վարձատրման հիմնական ձևն էր շաղիղդանեն՝

շարաթ սրբ աշակերտներին վարպետի կողմից տրվող վարձը: Վարձատրությունը եղել է նաև պայմանավորվածությամբ. հիմն աշակերտը, ասենք, ձեռնադրվելիս իր ծախսերը ինքն էր հոգալու. ապա վարպետը վարձատրում էր նրան, իսկ լքե ոչ, մնում էր վարպետի հայեցողությանը: Սակայն աշխատանքը Անդրկովկասում դիտվել է որպես արյուն-քրտինք և գրեթե միշտ վարձատրվել է: Այս երևույթը արևելքում ցայտուն է և, ինչպես Ս. Նղիադարովն է նշում, արևելյան է¹⁰⁹:

Ալեքսանդրապոլում համաքարական սահմանափակումները արդեն ցայտուն չէին, վարձատրությունը վարպետները որոշել են կամայական, երբեմն հաշվի չառնելով նույնիսկ գլխավոր վարպետի գիտողությունը: Այդպիսի վերաբերմունք է եղել նաև աշակերտության ժամկետը հարցում: Աշակերտության ժամկետը Ալեքսանդրապոլում, ամենա արհեստի գծավարությունից, եղել է ամենաշատը երեք տարի¹¹⁰, իսկ ավելի ուշ, XX դարի սկզբներին, երեք տարուց հետո աշակերտը «վարպետացու» էր դառնում մեծ մասամբ առանց մուծումների և կարող էր ինքնուրույն կրպակ բաց անել¹¹¹:

Աշակերտից ենթավարպետ¹¹² ձեռնադրվելիս եղել են որոշ սովորույթներ ու ծեսեր, որոնց զգալի մասը հանդիսավոր ընույթ են տվել ձեռնադրությանը, բարձրացրել ձեռնադրվողի պարտավորությունները իր շուրջը համախմբված մի խումբ մարզկանց նկատմամբ: Աշակերտը ձեռնադրման է ներկայացվել վարպետի խոսքով, նրա Լրաշխավորությամբ:

Ենթավարպետների վերաբերյալ աղպտրական նյութերը նույնպես ցույց են տալիս տյն զգալի առանձնահատկությունները, որ տեղ են գտել Ալեք-Պոլում:

Ալ. Մխիթարյանի հիշողություններում կան նյութեր, որոնք վերաբերում են ենթավարպետ

¹⁰⁷ Տե՛ս С. А. Егузаров, նշվ. աշխ., էջ 74:

¹⁰⁸ Ս. Չալոխյանը պատմում է, որ երբ ինքը ենթավարպետ էր, ոսկերիչ վարպետներից մեկն իրեն պատվիրել է մի լավ կաղապար ստրքել: Անկ ամիս շարադրվելուց հետո պատրաստել է: Ոսկերիչը հավանել է գործը և պատվիրել կաղապարը միև ջրով («ջրել»): Միև է սովորականի նման և ամբողջ մեկ ամսվա գործը փչացրել: Ոսկերիչն ասել է. «Է, է... հլը խակ ես, լավ ուստա ես, մեկրմ էլ շինե, արի ստրվեցնեմ, թե ինչ պիտի ջրել»: Իր պատիվը գետին չափելու և «թափի» համար» ենթավարպետը երկար շարադրվելուց հետո պատրաստել է առաջինից ավելի լավ կաղապար: Ոսկերիչը վերցրել է կաղապարը, օճառ քսել վրան և թեթևակի միևել, հետո կրկնել տվել այդ նույնը և հավանություն տալով վերցրել կաղապարը:

(Տե՛ս ՂԱԻԱ, հեղինակի հավաքած նյութերը):

¹⁰⁹ Տե՛ս С. А. Егузаров, նշվ. աշխ., էջ 112:

¹¹⁰ ՂԱԻԱ, հեղինակի հավաքած նյութերը, ՊԻԱ, Մ. Քամբաղյանի նյութերը, տետր 2:

¹¹¹ ՂԱԻԱ, հեղինակի հավաքած նյութերը:

¹¹² Տարբեր տեղերում այս աստիճանը տարբեր և անվանվել, օրինակ՝ խալֆա թուրքերի, քարգար՝ պարսիկների, վարպետացու, կես ուստա՝ հայերի մեջ և այլն: Բոլորի իմաստն էլ ենթավարպետն է՝ աշակերտությունից հետո Լրիսարկ աստիճանը, եթե չհաշվենք աշակերտության և ենթավարպետության ընթացքում որոկավորմամբ և վարձատրությամբ նշվող առաջին քարգար պարսկերեն բառացի նշանակում է րանվոր: Քարգար կարող էր լինել նաև այն ձեռնադրված վարպետը, որն աշխատանքի էր մտնում մեկ ուրիշ վարպետի մոտ (Տե՛ս Ю. Ф. Ахвердов, նշվ. աշխ., էջ 30-31):

«խալֆա» ռեկուներն ունենում է. որ այն բանից հետո, երբ ծնողները մեծ դժվարությամբ խնայել են վարպետին իրաձեռքի շնորհիւ՝ սովորեցնելու իրենց դավազին, երբ աշկերտը արգեն թերի 4-5 տարի ծառայել է վարպետի մոտ, նրան ծնում են խալֆա Պետր է ենթազրել, որ Ալ. Մխիթարյանի այս հիշողությունները վերաբերում են Ալեք. Մուրում համբարությունների սկզբնական շրջանին, երբ այն որպես արհեստավորական քաղաք գետնոր էր սկսել հանդես գալ, և, բնականաբար, համբարության միջնադարյան մնացուկները դեռ պայտուն պետք է լինեին.

Խալֆան են սծել հետևյալ կերպ.՝ Նախ, աշկերտի ծնողները կամ ինքր՝ աշկերտը վարպետին ավել են «40—50 մանեթ» հյուրասիրության՝ սեղանի համար. Հրավիրվել են ուսանողները, նվեր է տրվել ներկա գտնվող բոլոր վարպետներին, սակայն ամենից լավը և թանկագինը՝ իր վարպետին. Կրոնական սրահները կատարելուց հետո վարպետը սրահել է աշկերտին և իր «մեծությունն» ու «տրամադրատվությունը» ապացուցելու համար մի երկու թեթի ապստակ է տվել նրան. Այնուհետև աշկերտը ձեռք է եկել, նրան մոտեցել է ձեռքը և խրատել՝ «վարպետի սարերը լվա, ջուրը խմե», իսկ հետո սկսվել է կերտիւումը, որի ընթացքում վարպետները խրատականներ են կարգացել ենթավարպետին. Վարպետը օժված խալֆին մի բանի գործիքներ է նվիրել և պարտավորվել օգնել նրան¹¹³:

Այս նկարագրությունը վաղ շրջանին է վերաբերում. Իրանից հետո ձեռնադրման ձևը պետք է ավելի պարզեցվել է. Ուշ շրջանի մի նկարագրությունից ակնհայտ են տրվեն որոշ վերափոխություններ. Գլխավոր վարպետը մի բանի վարպետների հետ ստուգել է աշկերտի գիտելիքները, որից հետո հարց է տվել վարպետներին. «Առաքել, խի՞կ կրնա՞ս ուսում գտնեա՞ս. Հովանություն ստանալով, շարունակել է, «Էս ադի մեղքը ձեր վիզը», և գիտելով վարպետացուին տակ է հետևյալ խրատականը. «Չտեսածդ չվիայես, չսածդ չխոսես, չզրածդ չվերցնես, փրիք անե՞ծքին ենթարկվես, եթե այդ պատվիրանները չկատարես»: Այս բոլորից հետո հյուրասիրվել են սուրճով կամ շանադով. Վարպետը գոցնայ է կտակ վարպետացուի մեջքին, և օրհնել են՝ «Բարով վարպետ գտնեսաս. Վարպետացուն թաշկինակներ է նվիրել վարպետներին, և ու՝ գլխավոր վարպետին, 50 կ.՝ եղիթրաշուն,

արով միդգ են զնել ու միասին կերել. Վարպետները վարպետացուին սկսել են խալֆա անվանել. Վարպետացուն պետք է հարգեր վարպետներին. Եթե ցանկություն չունենա մնալու տվյալ վարպետի մոտ, մեկ տարուց հետո կարող էր ուրիշի մոտ մտնել աշխատանքի. Որովհետև էր նաև նրա վաղձու. Վարպետացուն կարող էր վարպետ ձեռնադրվել նաև ուրիշ վարպետի մոտ:

Վարպետ ժառանգին վարպետացու կամ վարպետ դարձնելիս ժամկետը շատ հաճախ կրճատվում էր, սակայն հյուրասիրությունը, նվերները ազելի ճոխ էին լինում, ու թանկ էր նստում, որը կարող էր վճարել միայն ունեցողը. Մնացած ղեպքերում աշկերտը և վարպետացուն այդ ծախսերը հոգում էին հիմնականում վարպետից ստացած իրենց պուժարներից: Նրանք պարտավոր էին որոշակի օրեր նվերներով պնալ իրենց վարպետի և զխավոր վարպետի առնել շնորհավորելու. Ընդունված է եղել մեծ ունեներին պնալ պխավոր վարպետի ունե, իսկ բարեկենդանի հինգշաբթի օրը՝ իրենց վարպետի ունե և ալլն¹¹⁴: Այս ամենը հաճախ շատ թանկ էր նստում աշկերտներին և ենթավարպետներին:

Այնուամենայնիվ ենթավարպետներն ոգտրվել են այնպիսի արառություններից, ինչպես ինքնուրույն և առանձին գործելու, առանձին խանութ ունենալու իրավունքը և այլն:

Ուսուցում է եղել վարպետի կողմից և ենթավարպետին կրպակ և գործիքներ արամաղելը. Լմել են նոր կրպակը (խանութ), կերտիւում արել, մոմ վաւել օջախին և բարի վայելում ու գործերի հաջողություն մաղթել նորընծա ենթավարպետին. Ողնություն ստացած ալապիսի ինքնուրույն ենթավարպետին Ալեքսանդրապոլում անվանում էին «չաղօ (ճրպ), ալսինըն՝ որեւ վարպետի վառած ճրպ, լույս, որպես իր արհեստի շարունակող. Մեծ պատիվ էր ալպիսի շատ ճրպներ ունենալը. Գովասանքով են խոսել նման վարպետի մասին. Ալպիսի «խոճով» վարպետներին ավել են գահադան պովասանական մականուններ:

Հաճախ ենթավարպետները մինչև վարպետ դառնալն աշխատել են իրենց վարպետի մոտ. Սակայն նույնիսկ այս պարպում էլ ենթավարպետան արգեն պիտվում էր որպես կես ուսում և օգտվում էր որոշ արտոնություններից. Ինչպես Ալեքսանդրապոլի վաղ շրջանի նյութերից մեկում երևում է, աշկերտը ենթավարպետին «փեյրաշ ձվածեղ» է

¹¹³ Ալ. Մխիթարյանի անտիպ հիշողություններից, որոնք գտնվում են նրա թու Կ. Իսրազարյանի սեփական արխիվում, չենխնայանում:

¹¹⁴ ՀԱԻԱ, Գեղեակի հավաքած նյութերը:

¹¹⁵ Գրու, Կ. Նիկողոսյանի նյութերը, տետր 7:

տվել, որպեսզի նա «չարիս քաշել սորվեցնեն»¹¹⁶, Պարզ է, եթե վարպետը ենթավարպետին չդիտեր որպես լիարժեք օգնականի, նրան չէր վստահի աշկերտին, և «փեշքաշն» էլ արտառոց կթվարձեր, որ ենթավարպետը Ալեքսանդրապոլում, որպես «կես վարպետ» վարդապետացու, օգտվել է որոշ արտոնություններից, մի բան, որ գրեթե չի նկատվել Անդրկովկասի ավելի վաղ կազմավորված արհեստավորական արհեստի քաղաքներում, ինչպես Ախալցխան, Ախալքալաքը, Թիֆլիսը:

Վերոհիշյալ արտոնություններից առավելագույն օգտվել են վարպետաց որդիները: Բայց նույնիսկ այդ դեպքում էլ «երես ավող» վարպետները դիտողություն են ստացել համարություն գեղավարությունից: Այնուամենայնիվ, վարպետները չէին կարող անասել դժվարություն ատաղացած նոր ենթավարպետին, վերջին հաշվով կար արհեստավորների ղեկավար պահանջ: Օրինակ, հյուան ենթավարպետներից մեկի հիշողությունն իրեն «խալֆա» օժելու մասին. օժելուց հետո նրան շնորհավորում է իր քարաաշ վարպետ հայրը և հեռեկան է ասում. «Արհեստը օսել ընդհանր է, առավոտից առ կեսօր թե սոված էլնիս, կեսօրեն ետե քու արհեստը կկշառան քեզիս, Համարություն մեծ գոյություն ունեցող կարգին հակառակ, վարպետը նշված «խալֆի» հետ «հախ է կտրում 10 մանեթ և 5 կ. էլ թրաշի փող»: Ընդհանրապես հախ են կարել 2 ռ. և 3—5 կ. «թրաշի փող»: Այդ բանի համար վարպետը դիտողություն է ստանում «ուստարաշի խորթնեց Մանուկից», որ նա խախտում է «ասնաֆի հախի կարգը»: «Հախիս» կարելիս ներկա է լինում ենթավարպետի հայրը, որը հետո խմիչք է հանել և շնորհավորանք են արել ենթավարպետներին¹¹⁷:

Այնուամենայնիվ, ենթավարպետը, չնայած իր որոշ ազատությունն ու ինքնուրույնությունը, մնում էր որպես «կես ուստա» և շատ բաներում համարություն վարպետներից ու ղեկավարներից կախյալ: Դժվար էր համարություն լիարժեք անդամ՝ վարպետ դառնալու: Նույնիսկ ինքնուրույն ենթավարպետը պետք է շահեր վերոհիշյալների բարեհաճությունը:

Դարերի ընթացքում համարություններում մշակվել էին նաև փոխօգնություն, արհեստները սերնդից-սերունդ փոխանցելու և այլ ավտոդուլթային սովորություններ, առանց որոնց անբացատրելի կլինեին նրանց հարաանությունը: Բացի այդ, յու-

րաքանչյուր վարպետ գիտակցում էր, որ հետագայում իրեն աջակցողը, օգնողը համարություն մեծ լինելու են նախ և առաջ իր օգնությունը. բարեհաճությունը տեսած օգնականը, տշկերտը: Նա աշխատում էր իր ուսուցիչ ծերունի վարպետների նկատմամբ ունեցած վերաբերմունքով օրինակ ծառայել աշկերտներին: «Եմ ուստեն իր ուստին գլուխ էր տալիս», նշում է վարպետ Մնացականը, — «նստեցնում էր դադողի վրա», որը, ի դեպ, սուրբ էր համարվում գրեթե ամեն մի արհեստում. — «դույֆն էր պատվում և հետո էլ մե արծաթ շխտնոց»¹¹⁸ կուտար»¹¹⁹: Այս օրինակը պետք է որ վարպետը շնորհակալ աշկերտին:

Անդրկովկասում ամենուրեք չէ, որ ենթավարպետները կարողացել են հասնել վարպետի տատեմանի: Դա կախված է եղել արհեստի վիճակից տվյալ վայրում, ընդհանուր տնտեսական իրադրությունից, համարությունների կարևորությունից տվյալ ժամանակաշրջանում, նրանց մեծ տիրող կարգերի խստությունից և այլն:

Անդրկովկասի Թիֆլիս, Ախալցխա, Ախալքալաք և այլ քաղաքների արհեստավորական կյանքի վերաբերյալ նյութերը ցույց են տալիս համարությունների ներքին կյանքում եղած ուղղությունների ու ավանդույթների կիրառման տարբերությունները, սովորությունների վանցառությունների կամ կատարման գործադատմանը:

Թե որքան գժվար էր վարպետ ձեռնտորվելը Ախալքալաքում, երբում է հետևյալից. դարձին և. Փեշապաշյանը պատմում է, որ չնայած իրենց աղղը սերնդից-սերունդ դարբիններ են եղել, սակայն իր պարպերի և հոր մոտ նա երկար ժամանակ փուքս է փշել միայն և աստիճանաբար է մոտեցել «չաքուլին»՝ մուրճին: Դժվար էր այն մասնակալ կերտից առաջ գնալը, որովհետև վարպետը հեշտություն էր սովորեցնում իր արհեստը: Բացի այդ, ուստարաշին, որը հաճախակի մոտում էր խստություններ, եթե տեսներ, որ աշկերտը մուրճ ուներ ձեռքին, բարկանում էր, որ վարպետները ժամանակից շուտ են թողնում նրան մոտենալու գործին և «զայ էնելու» երկաթն ու ածուխը: Այդ ժամանակ դրանք դժվար էին ճարվում և խնայվում էին: Սակայն տյառեղ բանը միայն ինչայդուլթյունը չէր, այլ իրենց մրցակից ունենալու ինդիքը: Դա էր պատճառը, որ մինչև հիմա էլ կան 80—85 տարեկան արհեստավորներ, որոնք հառաքակ մեկ կտրել չեն կարողանում, հնարավորու-

¹¹⁶ ՊԻԱ. Մ. Թամրազյանի նյութերը, տետր 2:

¹¹⁷ Նույն տեղում:

¹¹⁸ Վրացական դրամ 10 կ. արժողությամբ:

¹¹⁹ ՊԻԱ. Մ. Թամրազյանի նյութերը, տետր 2:

թյուն չեն ունեցել սովորելու, տարիներ շարունակ փութս են փչել, Սակայն,—նշում է պատմողը,— եղև են շատ ընդունակ մարդիկ, որոնք այնուհանդերձ կարողացել են հասնել խալֆուլթյան, դրանք եղև են վարպետների որդիներ և ձեռներեց մարդիկ¹²⁰։

Իրեթև նույն բանն է պատմում դարբին Խ. Դավթյանը. նա 15—18 տարի միայն փութս է փչել, շատ չնչին դումար ստանալով. դժվարությամբ է ենթավարպետ դարձել, վարձատրվել է շատ քիչ՝ տարեկան 10 ոտլոխի նա եղել է իր պապական արհեստի շարունակողը, սակայն դժվարությամբ են թողել իսկական զործին մոտենալու, համարակալն հսկողությունը խիստ է եղել և հնարավոր չի եղել շենթարկվել¹²¹։

Ախալցխայի մեխ ծեծող (սմիխլիս) Հ. Գարսյանը երկար տարիներ իր վարպետ հոր և եղբայրների մոտ փութս է փչել, հետո դարձել է ենթավարպետ և դրանից այն կողմ չի անցել¹²²։ Ալեքսանդրապոլում էլ սկզբնական շրջանում հեշտ չի եղել վարպետ ձեռնադրվել, սակայն ավելի ուշ ժամանակին վերաբերող մեղ հայտնի սովալների համաձայն, Ալեքսանդրապոլի համարային սովորույթները, ավանդույթները սկսում են դրսևորվել տարբերվել նշված քաղաքների ավանդույթներից, Անդրկովկասյան մի շարք քաղաքներում համարությամբ մեղ աշկերտ բնությունները, վարպետ ձեռնադրվողները պետք է հասած լինեին որոշակի տարիքի, Աշկերտի տարիքը կախված էր արհեստի ծանրությունից, բայց 13 տարեկանից ցածր տարիք ունեցողին աշկերտ չէին ընդունում, և՛ չէր ընդունվում սրտ բացասությունները ժողովների և շրավոր երեխաների նկատմամբ, Իսկ վարպետի համար չափանիշ է եղել «բեղ ու մորուստ»։ Հողիվ թև պատահեր «անբեղ ու անմորուստ» վարպետ, իսկ եթե կտր էլ, ապա նա շտենք այն հեղինակությունը, ինչ բեղավորը։ Ուստի վարպետ ձեռնադրվելիս երաշխավորողները նրա համարությունները նշելու հետ մեկտեղ, տվելուց են նաև, որ ձեռնադրվողը «արդեն բեղ ու մորուստով տղամարդ է»։

Անթավարպետից վարպետ դառնալու ամենակարևոր պահը ձեռնադրությունն էր, որը կրել է կրանալան ընտելի և ուղեկցվել ձեռնարկով¹²³։

Անդրկովկասյան արհեստավորական քաղաքներում այս կարգը ընդհանուր լինելով հանդերձ, ունեցել է նաև տարբերություններ։ Չնայած Անդր-

կովկասի համարական կենտրոնները միմյանցից շատ հեռու չեն եղել, սակայն ղեկավարությունների հարսկաստանից զաղթած համարությունների և Թուրքիայից եկած էսնաֆությունների մեղ եղել են, Ջանադան էին նաև ջրջանի տարբեր քաղաքների համարությունների որոշ սովորույթներ, նույնիսկ հարիներից զաղթած և բուն կարիք քաղաքում եղած համարությունները։ Այստեղ մեծ դեր են կատարել թե՛ ժամանակը և թե՛ տնտեսական ու այլ գործոնները։

Ընդունվող բոլորի համար այն էր, որ ձեռնադրությունը կատարվում էր համարության հանդիսավոր ժողովում, ուսուցիչ-վարպետի ներկայությամբ, Վերջինս ընդհանրում էր ենթավարպետի անձնական հասկանիչները, վարքը, ունակությունները, աշխատանքը և ապա ձեռնադրում կրանական արարողությամբ, որին հնաևում էր խնջույքը։

Կարիքիները իրենց հայրենի քաղաքում, իսկ այնուհետև Ալեք-Պոլ դաղթելուց հետո էլ սկզբնական շրջանում այսպես էին վարպետ ձեռնադրվում։ Վարպետները նայում էին ենթավարպետի կատարած գործը, և ընդհանուր հավանությունից հետո ղեկավար վարպետը նշանակում էր ձեռնադրման օրը։ Որեք անգ զաշտում, վարպետացուն «հաշ» էր պատրաստում, Հավաքվում էին համարությամբ վարպետները և նստում ըստ կարգի. վարպետը հարցնում էր ենթավարպետին. «Դու ի՞նչ կուս», այսինքն՝ ի՞նչ խնդիր ունես վարպետներին։ Ու համաձայնար ձեռքը մեկնելով վարպետներին, ասել է. «Կամքը էնոնցն է»։ Այնուհետև վարպետները հայտնում են, որ ուսուցիչն արժանի է, ինքն էլ արժանի է վարպետությունը։ Վարպետացուի դիրքին մի լավ են պեղել, ուսուցիչը բռնելով նրա աչից, ձախով «օրթալս» է արել, այսինքն ձեռքը պեղել է վարպետացուի վիզը, որը նշան է վարպետացուին հովանավոր լինելու։ «Ուստարաշին» խրատական է կարգացել մեծերի պատվը և իր պատվը պահելու մասին, հետո փոքրերին հնուցըրել են, ու «ուստարաշին» ցածրաձայն ասել է. «Եթե կսես ուրախ եղ ձեռնադրվել, կուս քաղաքում, կապույտ դմբեթի տակ, կանաչ խալու վրա»։ Այս պատվիրանը նա ոչ որի չպետք է հայտնել։ Այնուհետև տերսերն օրհնում է, կարգում է «Մաշտոցի» աշկերտ օրհնելու կտանը, «ուստարաշին» մի ապուտակ է տալիս աշակերտին, և սկսվում է ճաշկերույթը։ Վարպետացուն «խալաթ»՝ նվերներ էր տալիս ուստարաշուն, իղիթրտուն, մի-մի թաշկինակ՝ ներկա վարպետներին, մեղրամոմ՝ փրիի համար։ Ամենամեծ նվերն ստանում էր իր

120 ՀԱԻԱ, հեղինակի հավաքած նյութերը։

121 Նույն տեղում։

122 Նույն տեղում։

123 Տե՛ս Շ. Ա. Էստրադոս, Նշվ. աշխ., էջ 138—142։

ուսուցիչ-վարպետը Այդ նվերը տրվել է ձեռնագրումից առաջ¹²¹։

Ձեռնագրման այս ծեսը հեռագրայում պարզեցվում է։ Մնայուն է լինում քահանայի օրհնությունը։ Մեկ ուրիշ նկարագրության մեջ, որն ավելի ուշ շրջանի է, նշվում է, որ վարպետացուն վերջին տարում իր «ուստի» հետ 40 ուրուլու հախ է կրարում, ուսման խոստատնում է նրան «օրթախ» շինել՝ իր հովանավորությամբ վարպետ դարձնել։ Աշխատանքը նայելու մասին այստեղ խոսք չկա, սակայն պետք է ենթադրել, որ նա համաքարությանը լավ ծանոթ ենթավարպետ է եղել։ «Օրհնությունը» նշանակվում է Ալեք-Պոլի հարուստներից մեկի՝ Քյանդարովենց այգու ծառերի տակ, իր «աւաթին» որպես նվեր դնում են մեծ «փուշի», ուստարաշուն՝ փոքր «փուշի», մյուսներին՝ «աղլուխներ»։ Իր «ուստի» կողքին կանգնած «Մաշտոց» է լսում, որից հետո ուստաբաշին պաավիրում է՝ հավատարիմ լինել արհեստին, փրի՛ հայր Հովսեփի (հյուսների փրի) օրհնությունով մեծանալ։ Այնուհետև բոլոր «ուսանքն» էլ մի-մի օրենք են ասում իրեն։ Իր «ուսանքն» իրեն գովելուց հետո երկու ապտակ է խփում («ուսաա սիլասի»), համրուրում է ե ասում։ «Գնա որդիս, աստված քեզի խելք ու շնորհք սաա։ Վարպետացուն համրուրում է իր հոր, վարպետի ե մյուսների ձեռքերը, նվերները՝ բաժանում, նստում են ինքույքի ու երեկոյան վերադառնում առանձին¹²²։ Սովորաբար ուրիշ տեղից եկած վարպետին էլ այսպիսի ժողովներում էին համաքարության անգամ հաստատում։ Ուրիշ տեղից եկած անձը պետք է ներկայացնել կամ փաստաթուղթ, կամ փորձնական աշխատանք, պետք է վճարեր մուսքի համար, նվերներ և տներ դիլավոր վտրուկտին և օգնականներին։ Այս կարգը հետո սուտիճանաւորութուլանում է¹²³։

Վարպետ ձեռնագրվելուց հետո, սովորաբար, ուսուցչի գործիքներով նա աշխատում էր իր վարպետի մոտ, նրա «օրթաղությամբ», մեկ տարի, սակայն սա տարտադիր չէր. նա կարող էր ե իր վարպետի նվիրած «մեկ ձեռք» գործիքով առանձնանալ։ Վարպետները սովորաբար աշխատում էին լիովին «տան տղա» դարձնել նրանց։ Դարձնում էին իրենց փեսան, դառնում էին նրանց լաւքավորը ե այլն¹²⁴։ Ուսուցիչ-վարպետները աշխատում

¹²¹ Անալիտիկայում վարպետ շնորհելու մասին տրվել է նաև պաշտոնական վկայագիր։ Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Մի փաստաթուղթ Ախալցխայի հայերի կենցաղի վերաբերյալ, ԲՅՀ, 1967, № 3, էջ 165։

¹²² ՊԻԱ, ԻԲ. Բամբաղյանի նյութերը, տետր 2։

¹²³ ՊԻԱ, Ն. Նիկողոսյանի նյութերը, տետր 7։

¹²⁴ Նույն տեղում։

էին նոր վարպետի համաքարությունից ստացված փայաբաժինը, նրա եկամուտները պահել իրենց ընտանիքի սահմաններում։ Ուսուցիչ-վարպետը համար ձեռնտու էր ունենալ վարպետ օգնական, դա մի կողմից մրցության հնարավորություն չէր տալիս, մյուս կողմից, փաստորեն, նոր վարպետը կմնար արտոնություններով օժտված ենթավարպետի դրության մեջ։ Եվ, բնականաբար, մի փոքր նրա վարձը ավելացնելով, ընդհանուր եկամուտը նորից կմնար հին վարպետին։

Արհեստի համար դժվարին դրության ժամանակ համաքարությունները առանձնապես շահագրգռված չեն եղել բաղամացնելու կրպակների թիվը։ Պատահում էր, որ համաքարական կարգով եթե արդեն անհրաժեշտ էր մեկին ձեռնագրել, ձեռնագրում էին, իսկ հետո աշխատանքի ընթացքում պարզվում էր, որ լիակատար չի տիրապետում արհեստին։

Այդպիսի դեպքերում համաքարության ղեկավարությունը ձեռնադրեն պատժում էր նրա վարպետին, իսկ նոր վարպետին տալիս էին կատարելությունով մեկ ուրիշի մոտ¹²⁵։ Այսպիսով, փաստորեն, վարպետի ձեռնագրումը հետաձգվում էր, նա ի վիճակի չէր ինքնուրույն գործունեություն սկսելու։

Աշխատությունից մինչև վարպետ ձեռնագրվելը համաքարական կարգով կային ընդհանուր դրամարկի օգտին գտնվող մոծումներ, որոնցից զոյանում էին համաքարության զանազան նպատակները։ Համար սահմանափակ գումարները¹²⁶։

Այլքսանդրապոլում մուսքի գումարները զոյանում էին հիմնականում վարպետների, ենթավարպետների ձեռնագրությունից, կրպակ բաց տնելուց, օրհնությունից, նորածնի համար գանձումներից, նորապսակների նվերներից, որը շատ հաճախ դրամական էր լինում, պատարագից սւ թա-

¹²⁵ Նույն տեղում։

¹²⁶ Բացի համաքարության օգտին գտնվող գումարներից, աշխատանքապուրջի վարպետները (առանձին կրպակների օրթաղությամբ վարպետները) սովորություն են ունեցել բաժանակա պահելու։ Այդ «բաժանակ» մեջ էր գցվում օրվա եկամուտը իրար մեջ բաժանելիս։ Կիսովո գրամը Այսպես, եթե հավաքված գումարների (մեկ ուրիշանոց, երեքանոց, հնգանոց ե այլն) թիվը կենտ էր, ապա այն չէին մանրում ե գցում էին բաժանակ մեջ։ Եթե օրվա համարը Համաքարությունների կազմակերպական գերի անկումով բաժանակ պահելու սովորությամբ առանձին կրպակներում ավելի է տարածվում։ Այս գումարներով վարպետները հողում էին իրենց կարիքները, երբեմն օգնում էին միմյանց հիվանդության, թաղան, գերախտության, բարսանիքի զեպում։ (Տե՛ս ՇԱԽԻԱ, հեղինակի հավաքած նյութերը)։

զումից, տուգանքներից: Տուգանքները գանձվում էին վեճի, կոճի, հաշոյանքի, կոպիա վերաբերմունքի, խոստովանությունից և հաղորդումից իրաժարվելու, եկեղեցական տոները խախտելու և այլ զեպքերում: Անդրկովկասի արհեստավորական մի քանի քաղաքների որինակով Ալեք-Պոլում տարածված էր նաև շարաթ օրերը դրեթե պարտադիր կարգով համարվող կաֆթալը-ը (ս. հավթալը-ը): Այս դամարը հավաքվում էր ըստ ցանկության և մտնում էր համարություն զրամարկեր: Պախտվում էր ինքնակենսության կարիքների և մեծ ծախսեր պահանջող հաստատակախ գործերի համար:

Այսպիսով, համարությունն ուներ իր դործունեությունը վարելու որոշ կարգ, որով հնարավոր էր պահում կարգավորել արտադրական, տնտեսական, հաստատական, հարկային, պաշամունքային, վարչական, ֆինանսական և այլ հարցեր. կարևոր էր համարի հայթայթման, արտադրության և արտադրանքի վաճառման կազմակերպումը, որը կախված էր համարություն միասնությունից:

Այս բոլոր ստիպում էին համարություն հետ առնչվող մարդկանց, հաակապես տնտեսականներին, շափավորել իրենց զենքն ու հաշվի առնել համարությունների շահերը: Նրանք ստիպված էին այդ սենյ, շխրցնելու համար վաճառվող հումքի, ապրանքների իրենց հիմնական սպասույթին՝ մեծամասնություն կազմող արհեստավորներին: Ալեք-Պոլում, չնայած առանձին հակամարտություններին, տնտեսականներն աշխատում էին փոխադարձ փոխհարկումը և սխաշահումներով սերտ կապ պահպանել համարությունների առանձին վարպետների հետ: Այլև, վարպետներից մեկի կինը կամ քնտանիքի այլ անդամը մաներ, տսներ, կառքի վաճառախառնվել, նրան մեծ հարգանքով բրամցելում էին ամեն տեսակ կտոր, հյուրասիրում, հետո զնածը փախտվում և կտոր վարձելով հարգանքով ճանապարհում: Այդպիսի հաճախորդին սրել, բան էլ (սփուշիս, շալ և այլն) օվեղրաշա էին տալիս: Հետո հաշիվը ուղարկում էին վարանտին կամ աուն: Վարպետը այն կարող էր վճարել ցանկացած մամանակ: Նույնպիսի վերաբերմունք, բնականաբար, ցուցաբերում էր նաև վարպետը տնտեսականին¹³⁰:

Իրենց փոխհարկումը հաճախորդների կամ համարությունների հետ առնչվող այլ առնձանց նկատմամբ պահպանելու համար համարություններում կիրառվում էր պատմի այն միջոցը, երբ

վատ գործ արած վարպետի արտադրանքը ի ցույց էին դնում: Հատրաստված իրը հակցնում էին կբպակի ճակատին, թե՛ սրան վատանել ի կարելի:

Մատի միջոցներ էին նաև տուգանքները, ասանաֆիս հաշ տալը, կանոնից դուրս (յոլսուզ) հանելը: Ալեք-Պոլում աարերը պատիժներ որոշելիս զխաժոր վարպետը, օգնականները, ներկա զտնվող վարպետները խոսում էին ցածր, չէին մխում, երիտասարդներին ընդհանրապես մասնակից չէին դարձնում պատաժներին: Պատիժը վճելուց հետո, իղիթրաշին վարպետի գործիքները դնում էր զազգա-ի վրա, հանել էր տալիս վարպետի զոդնոցը և նույնպես դնում զազգահի վրա: Խանութի փակում էին մի քանի օրով, նայած որոշմանը: Գիշերները բանային հանձնվում էր խանութի տիրոջը: Պատիժը լրանալուց հետո վարպետները դնում էին տուժածի տուգանքը ուստարաշուն հանձնելու: Երբեմն ցարդում էին սպասարասած առարկան ու խփում կբպակի ճակատին: Տուգանում էին երբեմն 4—5 ֆունտ մեղրամամով: Անհագանդներին, փոխ վարքի տեր մարդկանց երբեք տեղում զգուշացնելուց կամ պատմելուց հետո հետցնում էին համարությունից:

Ալեք-Պոլում վարպետները փոխ զործ կատարած վարպետի աշխատանքը չէին շարունակում, ստիպում էին պատվիրատուին զիմելու նույն վարպետին: Իրանով նույնպես նրանք միմյանց «ձևոր էին բռնում»: Սակայն ելլե աշխատանքը խոտան էր, և հետաքննող չէր ընդունել, ապա այդ զեպքում էլ պատվիրատուն մինչև այդ զործը՝ չենքը, իրը և այլն շրանդեր հիմնովին, մեկ ուրիշ վարպետ չէր վերցնի այն: Ետո հաճախ տվյալ վարպետը ինքն էր բանդում իր զործը, չթողնելով, որ բանը հանի տնտեսավության: Գլխավոր վարպետները հսկում էին, որ վարպետները պատվիրատուին չխտրեն: Մյուս կողմից հետևում էին, որ պատվիրատուն էլ իր վարպետին կամ համարությունը չխտրի¹³¹, որպիսի օրինակները շատ են¹³²:

¹³⁰ С. А. Езуазапов, «Զգ. աշխ.», էջ 158—161.

¹³¹ ՊիՒԱ, Հեղինակի հավաքած նյութերը:

¹³² ՀԱԽԱ, Կ. Գորգորյանի հաղորդած նյութերը:

¹³³ Պատմում են, որ Ալեք-Պոլում եղել է կապալառու-Ռոթաֆը, որը վերցրել է Ալեք-Պոլի բերդի կառուցումը և զամանորեն շահագործել բարձրանքին, կառուցող վարպետներին: Նա հարուստ էլ անգրագետ, սակայն համեստ, աշխատասեր ու համբերասար բարաստներ Ղաֆայեցի Հովհաննիսին, Թաթևսեցի Կարապետին, Աղոյեցի Ռիմոնին, Իսկերը Ռազավորի պարզեռամանը ներկայացնելիս են եղել ամբողջ կառուցող վարպետներին, ապա ամբողջ Ուղղափառ եկեղեցու հիմնադիր և կառուցող Նանաժոր վարպետ Գինոսի:

¹³⁰ ՊիՒԱ, Ն. Նիկողոսյանի նյութերը, տետր 7:

¹³¹ ՀԱԽԱ, Հեղինակի հավաքած նյութերը:

Չարաշահումների, ինքնապաշտպանության, իրենց գոյությունը պահպանելու համար էր, որ համաքարությունները տարեցստարի մշակում ու կիրառում էին ներքին բազմաթիվ կանոններ¹³⁶։

Համաքարության գործունեությունը գլխավորելու համար ընտրվում էր համաքարական ղեկավարություն՝ գլխավոր վարպետ (ուստաբաշի), օգնականներ (աղսախկալներ), դանձապահ (խաղնադար), կստարածու (իգիթբաշի)։ Արհեստավորական խավի ղեկավար մարմինը, այսպիսով, գլխավոր վարպետն էր, որոշ ղեկավարում՝ ընդհանուր հարցերի լուծման դեպքում, մի քանի համաքարությունների, ավելի շուտ՝ 12 համաքարությունների գլխավորների խորհուրդը։ Այդօրինակ միասնությունը ավելի հաճախ հանդես էր գալիս կրոնական հանդիսությունների, համաժողովրդական առների ժամանակ¹³⁷։

Համաքարության ղեկավարությունն իր ներքին պորժերում ուներ բավականին լիազորություններ։ Բացի մանր վեճերից ու հարցերից, գլխավոր վարպետը մեծում էր նաև տնտեսական, վարչական և դատական տիպի դորժեր։ Այնպես որ հարկում էլ պիտույի վարպետը ունեցել է նման լիազորություններ։ Նյութերից մեկում նշված է, որ համաքարության ավազանին և գլխավոր վարպետը ղանցառուններին բանադրում, սուղանում էին, սակայն եթե

փոխարեն կապալառուն ներկայացնում է ալտայի ուրիշ վարպետների, նախօրոք վարպետ Գինոսին խաբելով դիմատուն ուղարկելուց հետո։ Վարպետ Գինոսին է նրա նման այլ վարպետների մատակցելը շարունակեցին Այեր-Պուի կառուցումը և Եկերդի ուրուղ հիշել են կապալառուի անարդարացի վարմունքը ու բարձր պահել վարպետ Գինոսի պատիվը (Պիկ, ԼԲ. Թամրադյանի նյութերը, տեսար. 3)։

¹³⁶ Այդ տեսակետից ուշադրում է պրոֆ. Ղաֆադարյանի մեր կողմից բանիցս հիշատակված հողվածը Ախալցխայի արհեստավորների կենցաղի վերաբերյալ 1843 թ. մարտի 15-ին քաղաքի ռեբելիա մարդկանց ու անվանի արհեստավորների կողմից կազմված օժաստատություն վասն բարեղոյն կարողությունների զարթոնականացման փաստաթղթի վերլուծության հետ մեկտեղ բերված են հետաքրքիր նյութեր արհեստավորների արտադրական ու հասարակական կյանքի մասին։ Ախալցխայի էսնաֆությունների վարչական իրավունքների, հասարակական կենդանու խորթ երեխաների դեմ պայքարելու, տնտեսական ուղի իրավիճակում բարեկեցիկ կյանք ապահովելու մասին փաստերն ու վերոհիշյալ փաստաթղթերը հնարավորություն են տալիս նկատելու, թե ինչպիսի փոփոխություններ են կրել համաքարությունների կանոնները Այերքանդից հարավում, որտեղով են դրանք պահպանվել կամ վերացել նոր պայմաններում (նշված հողվածը՝ Մի փաստաթուղթ Ախալցխայի հայերի կենդանի վերաբերյալ. տես Բեշ, 1967 թ., № 3, էջ 165—178)։

¹³⁷ Տե՛ս Ք. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 85, Կ). Փ. Ախերով, նշվ. աշխ., մ. 11, էջ 1—3 և Зажюченко, էջ 3, С. А. Евсеев, նշվ. աշխ., էջ 13։

միայն «մեղավորը» ճանաչում էր անաֆի հեղինակությունը¹³⁸։ Սա ավելի է հավաստում մեր ենթադրությունը, որ Այերքանդից հարավում, որպես ավելի ուշ շրջանի արհեստավորական քաղաք, համաքարական կանոններին ու սովորություններին հետևել է աստիճանաբար թուլացող կարգապահությամբ. մանավանդ, եթե անհատ արտադրողը կարողացել է ինքնուրույն յուրա գնալ։

Վարպետները Այերքանդից հարավում հաճախ ինքնագլուխ էին Հյուսիս վարպետ Գ. Վիրապյանը նշում է, որ անվանի վարպետները շատ հաճախ հաշվի չէին առնում գլխավոր վարպետին, չէին սպասում նրա հանձնարարականին և պայմանագրության էին մանում ըստ իրենց ցանկության և այլն¹³⁹։ Պատվերների, հումքի, տեխնիկական այլ հնարավորությունների առկայությունը օրյակտիվ պայմաններ էին ստեղծում արհեստավորների համար և հնարավորություն տալիս հաճախ դուրս գալու համաքարական կաշկանդվածությունից։ Համաքարական կարգի մեջ նկատվող բոլոր փոփոխություններն ու հետզհետե նվազող կարգապահությունը նշանակում էին այլ միջնադարյան կազմակերպությունների քայքայումը։ Սակայն համաքարությունների վերջնական խորտակման նախապայմանը Այերքանդից հարավում¹⁴⁰ հանդիսացան կապիտալիստական դարձացման միտումները, որոնք նախապայմանաբար աստիճանաբար վերածվում էին վարձու բանվորների։ Այերքանդում այսպիսի էին պատկերվում երբեմն նաև վարպետները։

1850-ական թթ. նման երևույթը արտաուղի կիրվում էր միայն ժամանակակից նյութի ու անվանի վարպետը չէր կարող ունենալ համաքարության կարգը կամ անցնել պիտույի վարպետի խոսքից։ Իսկ քաղաքային վարպետի նկատմամբ կարող էր նույնիսկ ուժ գործադրել¹⁴¹։

Այդպիսի լիազորությունների համար պիտույի վարպետը պետք է ունենար հումքարության անդամների վատահոլությունն ու աջակցությունը, որպիսին համաքարության անդամները ցույց էին

¹³⁸ Պիկ, ներկողությանի նյութերը, տեսար. 7։

¹³⁹ ՀԱԿԻԱ, հեղինակի հավաքած նյութերը։

¹⁴⁰ Դ. Դ. Абсцадзе, Դ. Կ. Бериашвили, նշվ. աշխ., էջ 104։

¹⁴¹ Պատմում են, որ Գալուստ անունով մի կովարար վարպետի գլխավոր վարպետը որոշում է բոլորից անել։ Երբ նա կարողացավ հողեղոր հանել և խառնել երեք սորվ փուկ, քուստա Գալուստը չի ենթարկվում։ Այդ ժամանակ գլխավոր վարպետը հայհույում է նրան, ուղղադրում, խառնիլից դուրս դրում և դանձախակի սպան մեկ ու տուգանք նշանակում (Տե՛ս Մ. Թամրադյանի հիշողությունները, Պիկ, դսր. 103, տեսար. 1)։

տալիս իրենց իսկ շահերի տեսակետից: Իրեն հան-
ցանքի, սխալի, սրենքի խախտման համար ավելի
լավ էր ենթարկվել համբարտության կամ համքա-
րությունների պատժիս, տուգանքին քիչ ու
միքն: (հասարակական պարսավանքին), բան թե
համբարությունից դուրս բնկնել ու ենթարկվել
դատական օրգանների կրկնակի, եռակի կեղծ-
ստան ու շատ հաճախ անարդար բաշքշուկին:

Սակայն Ալեքսանդրապոլում արհեստների
տոնակառուվարուն շրջանում էլ չի եկատվել 12 դը-
խափոր վարպետներից կազմված խորհրդի գործու-
նեություն: Առավելագույն ղեկաբում սրահարանում
(«դաշինում») տվյալ համարության գլխավոր
վարպետը հրավիրում էր տարրեր արհեստների կամ
զբաղմունքի տեղ տնօրնի սարգիսնց՝ գլխավոր
վարպետ, անվանի վարպետ, բոստանչի և այլք: Ի
հարցը մենում էին¹⁴², նման պարզեցում է նկատ-
վում համարապան սովորությունների, ավանդույթ-
ների նաև այլ օգտիննում, օրինակ՝ գլխավոր
վարպետ բնարելիս երբեմն հաշվի էր առնվում
ոչ թե վարպետի տարիքը կամ փորձվածությունը,
այլ՝ գրագիտությունը, բնորոշակությունը, հաս-
րակության մեջ ունեցած հարգանքը: Սիշա չէ, որ
համարապան մոզովները հրավիրվել են տարբին
մեկ անգամ: Ըստ պահանջի, մոզովներ են հրա-
վիրվել տարբին մի բանի անգամ, և բնարել-
վել են բազմադասի հարցեր:

1890 թ. Ալեք. Պոլի քարտառ սրմնագիրները
անհրաժեշտ են համարում համարության ղեկա-
վարություն բնարել, որի համար նախ անցկացնում
են տվյալ արհեստի վարպետների դուցակագրու-
թյուն, մոտ 400 քարտառ սրմնագիր, որից հետո
մի «կիրակի համարվեցին» հին ղեկավարնու-
սանք», զբաղվում է տեղանտես վարպետու մեղ-
վին ներկա են լինում «Ամենափրկիչ» եկեղեցին
կառուցող անվանի վարպետ Սալիս Անդրիկյանը և
այլ նշանավոր վարպետներ: մոզովը վարել է մի
ավելի երիտասարդ վարպետ, իսկ գլխավոր վար-
պետ են տառաջարկ վարպետ Հովհաննես Ալա-
մադյանին (Հայաամադյան) և «ուստա... նիկոյենց
Խաչոյին»: Ընտրությունը կատարվել է թեկնածու-
ների կողմնակիցների աջ և ձախ կանգնելով, և զը-
խավոր վարպետ է բնարվել համեմատաբար ավելի
երիտասարդ Ալաամադյանի¹⁴³, Անվանի տարիտա-
վար վարպետների կողմին մոզովի ավելի երիտա-
սարդ նախագահի և գլխավոր վարպետի բնարու-
թյունը ապացույց է արհեստի մեջ հասակավոր և

առավել երիտասարդ վարպետների նոր փոխարա-
րություն: Բայց մեկ օրիչ վկայություն էր համ-
ն. որ անվանի տարիքավոր վարպետները ուստա-
բաշի էլ չիննին, նրանցից մի էրկու-երեք տարի
տարիքով ցածր վարպետ, անվանի երիտասարդ
գլխավոր վարպետները, նրանց դիմում էին եղբայր
«եղբայր», հարգալից բառով, իսկ ուսումնական
մարդուն կամ ուսուցչին՝ «պա աղբեր» («եղ-
բայր»)՝ և ի դեպ, մեծ հարգանք անվանի
պատիվ» անվանումները արվում էին այս կամ
այն վարպետին ոչ միայն նրա համար, որ տվյալ
վարպետը հասարակության մեջ հայտնի էր իր
բարքով կամ պատկանելի տարիքով, այլ նախ և
առաջ իր արհեստում, աշխատանքում ձեռք բերած
մեծ հմտությամբ: Սալիս Անդրիկյանը «անվանի»
ու «պատվով» վարպետ էր նախ և առաջ արհես-
տում հարաարապետի հմտության հասած լինելու
համար, չնայած անդրադիտությունը նրանից առաջ
սրմնագիր վարպետ Գինոսը «պատիվ» ուներ ոչ
միայն իր համեմատության ու հմտության համար,
այլ նախ և առաջ չինարարական գործում համա-
ռվածությունով ինժեներին հմտության հասած լինե-
լու համար: Արգար Մանուկը ոչ միայն եկեղեցիներ
կառուցելու, այլ աշխատանքի մեջ իր հարա-
մատության և խելացի նախազմերի ստեղծման հա-
մար: Մ. Բամբադյանը՝ մի բանի արհեստներ
խմանալու և հիմնականում աշխատատիրություն,
մեծ վարպետության համար: Չուլիսնից վարպետը՝
հմտա գործին անվազործ լինելու համար, նալ-
չաջան եղբայրները՝ դուրստանտեսական և դար-
նոցային գործիքների հայտնի վարպետներ լինելու
համար, հյուսն անվազործ վարպետ Տիգրանը՝ իր
կապած անվանների տարության ու սրակի համար
և այլն:

Այսպիսով, անվանի վարպետների «պատիվ»
հիմնականում աշխատանքն էր, և չնայած ազդա-
լին նախապետական, համարապան սովորույթ-
ներին, հմտա վարպետ էլիս գտնեցություններ
էլ աներ, զբանք անտեսվում կամ ներվում էին:

Սակայն ուստաբաշի բնարվելով, ով էլ որ
լիներ, երիտասարդ թե հասակավոր, գործելակեր-
պի մեջ առաջադիմությունը քիչ էր իջի, ասենք,
նրա ֆունկցիաները որոշ չափով կրճատվել էին
կամ փոփոխվել, տալ վարվելակերպը մարդկանց
հետ մնացել էր գրեթե հինը, գոտախարակչական
հիմնական միջոցները՝ նույնը, որևէ մեկին առաջ
բաշելիս նախադատությունը տրվում էր մառան-
դին և այլն¹⁴⁴:

¹⁴² ՀԱԻԱ, Զեդինաի համարած նյութերը:

¹⁴³ ՊԻԱ, Մ. Բամբադյանի նյութերը, տետր 7:

¹⁴⁴ ՀԱԻԱ, Ն. Գուրգույանի հարգած նյութերը:

¹⁴⁵ ՊԻԱ, Մ. Բամբադյանի նյութերը, տետր 7:

Գլխավոր վարպետի ֆունկցիաները Ալեք-
Պոլում ղգալի կրճատվել էին: Հիմնականում զբաղ-
վում էին հետևյալով՝ նայում էին աշխատանքի
որակին, բողոքի դեպքում պատրաստի դործի
վճարն էին վերջնականապես որոշում, եթե պատ-
վիրատուն հրաժարվում էր վճարել, որոշում էին
երբեմն պատրաստի առարկաների կամ կառույց-
ների՝ ընդհանուր արժեքը, աշխատանքի էին ու-
ղարկվում երբեմն նրանց հանձնարարությամբ.
կաղմակերպում էին ժողովներ և հիմնականում կրո-
նական առներին էին հետևում: Հումքի ձեռք բեր-
ման, բաժանման համար գրեթե չէին էլ մտածում,
որովհետև հումքն առատ էր, և ամեն մի վարպետ
իրն անձամբ էր առևտրականի հետ գործարքի մեջ
մտնում¹⁴⁶: Այս բոլորը ապացույց էր Ալեքսանդրա-
պոլի արհեստավորի համար սանդղաված ինքնուրույն
գործելու և արտադրելու նոր պայմանների, որոնք,
անկասկած, նշանակում էին համաքարությունների
հիսրի խախտում:

Սակայն որքանով որ համաքարական կարդի-
որոշ պահեր անհրաժեշտ էին պահպանել, արհես-
տավորն աշխատում էր դրանք հարմարեցնել իր
աշխատանքի ու կենցաղի պահանջներին: Օրինակ,
վարպետների համար նպաստակահարմար էր որոշ
վեպերում որպես միջնորդ դիմելու գլխավոր վար-
պետին, իսկ տուանձին ճյուղերի վարպետները՝ ի-
րենց ճյուղի ավագ վարպետին («բյոշու ուտոասի»),
որոնք լիազորված էին իրենց ճյուղի («բյոշի») հա-
մար: Սովորաբար աշխերուր, վարպետացուն, նույ-
նիսկ վարպետը իրենք տնձումը չէին բողոքարկում
համաքարության պեկավորին կամ պետական պաշ-
տոնյաներին, այլ պիմում էին վերոհիշյալներին:
Դատական պործերի պեպրում վերջիններս հանդես

էին գալիս որպես միջնորդ. հատարար և այլն,
Որպես նման դործերի վարձատրություն. նրանք
հյուրասիրվում էին, ընծաներ ստանում կամ իրենց
օգտին գանձումներ անում¹⁴⁷:

Համաքարական սովորությունների վերափոխու-
թյուն է տեղի ունենում նաև կրոնական տոների
պահպանման և կատարման ասպարեղում: Եղ-
բայրության կրոնական միասնության բնույթից
եկեղելով, համաքարությունները միշտ պահպանել են
կրոնական տոները, համաքարության սրբերին հար-
գելու կարգը, որը դրեթե չթուլացող հետևողակա-
նությամբ է կատարվել: Սակայն ավելի ուշ, Ալեք-
սանդրապոլում, կրոնական տոներն ու արարողու-
թյունները ղգալիորեն կորցնում են իրենց նշանա-
կությունը: Դա երևում է թեկուղ նրանից, որ կա-
րիքի մեջ դառնում արհեստավորը, անասնելով տոնի
իմաստը, աշխատել է նաև այդ օրը, ինչպես նաև իշ-
արհեստի համար արդելված օրերին, մի բան, որ
անհանդուրժելի էր XIX դարի սկզբին: Կարևոր է
այն փաստը, որ Ալեքսանդրապոլի համաքարությու-
նների մեջ դրեթե XIX դարի 2-րդ կեսից սկսած
միշտ էլ եղել են ոչ միայն այլազգի, այլև այլա-
կրոն ուրհեստավորներ: Բացի կրոնական պարտա-
վորություններից ու ծիսակատարություններից,
նրանք լիովին մասնակցել են համաքարության
կյտնին և ճանաչվել որպես համաքարության իրա-
վաճառաբ անդամ¹⁴⁸:

Այսպիսին էր Ալեքսանդրապոլի արտադրա-
կան կենցաղի ընդհանուր պատկերը մինչև հեղա-
փոխությունն ու սովետական կարգերի հաստա-
տումը:

¹⁴⁷ Պիժ, Ն. Իվոդոպյանի նյութերը, տետր 7:

¹⁴⁸ ՀԱԽԱ, հեղինակի հավաքած նյութերը:

¹⁴⁶ ՀԱԽԱ, հեղինակի հավաքած նյութերը: